ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
«ԱՐՏԵՆԻԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
2023-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ
ԹԱՄԱՐԱ ՄԻՍԱԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ԱՐՏԵՆԻ 2023Թ.

ՍԱՐԻ ՊՈՂՈՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաստատության անվանումը	ՀՀ Արագածոտն մարզի «Արտենիի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպություն
Հաստատության հասցեն	ՀՀ Արագածոտնի մարզ, Թալին համայնք, Արտենի բնակավայր, Բաղրամյան 7
Հաստատության էլեկտրոնային հասցեն	arteni2@schools.am
Հաստատության կայքէջը	https://arteni2.schoolsite.am/

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……..……..…… ……..……..4

1.1 Ուսումնական հաստատության գործունեության նպատակն ու առաքելությունը ……..……..……..……5

- Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրեր……8

1.2 Ուսումնական հաստատությունը և պետության կրթական քաղաքականության միտումները, համայնքի, շահառու խմբերի կարիքներն ու հնարավորությունները……..……..……..……..……..17

1.3Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները……..……..……..……19

- Ուսումնական հաստատության շենքային պայմանները…… ……..……19
- Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազա……..……..……..……24
- Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը……..……26
- Ուսումնական մանկավարժական համակազմի մասնագիտական որակները……..……27
- Ուսումնական հաստատության կրթության որակը չափորոշչային պահանջների համապատասխան……28
- Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորամուծությունները……32
- Ուսումնական հաստատության բազմակարծիք, նեռարական և մասնակցային արժեքային միջավայր ……33
- Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորություններ……..34
- Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինները……..……..……35
- Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը……..……39

2.Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր……..……..……..……..…43

3.Նպատակների, խնդիրների և ակնկալվող արդյունքների սահմանում……..……..…57

4.Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույց……59

- Ծրագրված խնդիրների կատարմանը խոչնդոտող հավանական գործոնների վերլուծություն……..……73

5.Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշները……74

6.Զարգացման ծրագրի իրականացման վերահսկողության մեխանիզմները……..……..…75

7.Եզրակացություն……..……..……..……76

8.Հապավումներ……..……77

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական ուսումնական հաստատության կարևորագույն ռազմավարական փաստաթուղթը զարգացման ծրագիրն է:

ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ոչ առևտրային կազմակերպության զարգացման 2023-2028թթ. ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել դպրոցի տնօրենի հաշվետվությունը, դպրոցի ներքին գնահատման 2022-2023 ուս. տարվա հաշվետվությունը: Ծրագրի նպատակն է նախանշել ուսումնական հաստատության հետագա զարգացման ընթացքը և հստակեցնել ուսումնական հաստատության առջև դրված խնդիրների արդյունավետ լուծմանն ուղղված միջոցառումները՝ ապահովելով ծրագրի իրատեսական և չափելի իրականացումը:

Սույն զարգացման ծրագրի նպատակները բխում են.

- ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով կրթության զարգացմանն ուղղված նպատակներից,
- Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրից:

«ՀՀ հանրակրթության մասին» օրենքով հանրակրթական դպրոցի գործունեության նպատակն անհատի բազմակողմանի զարգացումը, նրա առողջության պահպանումը, ինչպես նաև ինքնակրթության և լրացուցիչ կրթության պահանջմունքների բավարարման պայմանների ստեղծումն ապահովելն է: Այդ գործոնների առկայության պարագայում շատ կարևոր է, որ սովորողը գիտակցի՝ գիտելիքները, արդի տեխնոլոգիաները կրթության մեծագույն արժեքներ են, հատկապես, ժամանակակից աշխարհում, երբ գիտական նվաճումները հասարակարգերում կարևորագույն դեր զբաղեցնելու առումով ուղղակի անհրաժեշտ են: Ազգային, քաղաքական, տնտեսական որևէ խնդիր լուծում չունի առանց կրթության:

Ես՝ որպես մանկավարժական համակարգի աշխատող, կարևորում եմ դպրոցի դերը և վստահ եմ, որ պետք է որդեգրել այնպիսի ռազմավարություն, որի գլխավոր ուղղությունը ներդաշնակորեն զարգացած, սոցիալապես ակտիվ, աշխատասեր, գործունյա և ստեղծագործ, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված, անձի ձևավորմանը միտված կրթության համակարգի զարգացումն է:

Զարգացման ծրագիրը զուգորդված է կրթության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունների հետ՝ արտացոլելով դրանց ներդաշնակ կապը պետական, համայնքային, հանրային և մասնավոր կարիքների, ինչպես նաև համաշխարհային զարգացման միտումների հետ:

Ծրագիրս ուղղված է դպրոցի աստիճանական զարգացմանը՝ նախանշելով գերակա ուղղություններն ու ռազմավարությունները, որոնք ուղղակիորեն բխում են դպրոցի գործունեության ներքին գնահատման հաշվետվությունից, խորհրդակցական մարմինների հետ հանդիպումների արդյունքում ձեռք բերված առաջարկություններից:

1.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

ՆՊԱՏԱԿ

- Ազգային դպրոցի որդեգրած քաղաքականությանը համապատասխան, համակողմանիորեն զարգացած, հայրենասեր, պետականամետ, հումանիստ և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

- Յուրաքանչյուր երեխայի զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացի կազմակերպումն է, որը ուղղված կլինի աշակերտակենտրոն միջավայրի ստեղծմանը, և կապահովի հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքները:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

- Կրթել ու դաստիարակել քաղաքակիրթ, ստեղծագործ և ստեղծարար, նախաձեռնող, կարողունակ և մրցունակ, ժամանակի հետ համահունչ քայլող շրջանավարտներ, ովքեր պատրաստ կլինեն ապագայի մարտահրավերներին և կկարողանան փոխել աշխարհը դեպի լավը:
- Ստեղծել համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ- մշակութային կենտրոն հանդիսացող դպրոց:

Ուսումնական հաստատության գործունեությունն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով.

ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Սովորողների կրթական կարիքների բացահայտմանն ու նկարագրմանն ուղղված գործընթաց է, որի շրջանակում մշակվում է գործողությունների ճանապարհային քարտեզ, և միջոցներ է ձեռնարկվում այն արդյունավետ իրագործելու համար: Շատ կարևոր է կրթական գործունեություն ծավալելու միջավայրը. կահավորված դասարաններ, հագեցած լաբորատորիաներ, հարմարավետ դահլիճներ և սպորտհրապարակներ, գրքերով և ուսումնական նյութերով հարուստ գրադարան:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Սովորողների կրթական կարիքների բավարարման գործընթաց է, և իրականացվում է ուսումնամանկավարժական անձնակազմի կողմից՝ ներառելով ուսումնական պրոցեսը, հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումները: Այս գործընթացը ներառում է ուսումնական ծրագրերի կազմումը, մեթոդական ձեռնարկների կիրառումը, թեմատիկ և ուսումնական պլանների կազմումն ու կիրառումը, դասաբաշխման և ժամանակացույցի կիրառումը: Ուսումնադաստիարակչական աշխատանքներում ներգրավված են տնօրենի ուսումնական գծով տեղակալը, ՄԿԱՏ-ը, ԴԱԿ–ը, առարկայական մասնախմբերի ղեկավարներն ու դասղեկները:

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանն ուղղված գործունեություն է՝ դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա: Այն իրականացվում է դպրոցին վերաբերող իրավանորմատիվային փաստաթղթերի վարման կարգով՝ Կրթության մասին ՀՀ օրենքով, Հարակրթության մասին ՀՀ օրենքով, Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրեքով, Դպրոցի կանոնադրությամբ, Ներքին իրավական ակտերով և նորմատիվ փաստաթղթերով:

Ներքին և անհատական իրավական ակտեր, աշխատանքային պայմանագրեր, աշխատաժամանակի հաշվառման մատյաններ, տեղեկագրեր, խրախուսման միջոցներ, կարգապահական տույժեր և այլն:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՊԿՈՒ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Իրականացվում է բազմամասնագիտական թիմի գործուն ներգրավվածությամբ, Արագածոտնի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ ակտիվ համագործակցությամբ՝ մշտապես հատուկ ուշադրության կենտրոնում պահելով ԿԱՊԿՈՒ երեխաների ֆիզիկական դաստիարակության խնդիրները:

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով տրված լիցենզիաների՝ դպրոցն ունի իրավունք իրականացնելու տարրական և հիմնական կրթական ծրագրեր՝ աշակերտների հետևյալ սահմանաչափերով:

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	**100**
ՀԻՄՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	**100**
ԸՆԴԱՄԵՆԸ	**200**

Դպրոցն ըստ կրթական մակարդակների իրականացնում է 1-ին և 2-րդ աստիճանի հանրակրթական ծրագրեր մինչև երկու հարյուր աշակերտ սահմանաչափով:

- 1-ին աստիճան՝ 1-4-րդ դասարաններ (տարրական դպրոց)
- 2-րդ աստիճան 5-9-րդ դասարաններ (հիմնական դպրոց)

ԴՊՐՈՑԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի «Արտենիի հիմնական դպրոց » ՊՈԱԿ-ի ներքին գնահատման 2022-2023 հաշվետվության

Աղյուսակ 1. Դասարանների թիվը՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար

Դասարանների թիվը	2021-2022 ուս. տարի	2022-2023 ուս. տարի	2023-2024 ուս. տարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	1	1	1	անփոփոխ
2-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
3-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
4-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
5-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
6-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
7-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
8-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
9-րդ դասարան	1	1	1	անփոփոխ
Ընդամենը	9	9	9	անփոփոխ

Դասարանների փոփոխման պատճառը աշակերտների թվաքանակի աճն ու նվազումն է: Արտենիի հիմնական դպրոցում դասարանների թվաքանակի փոփոխություն վերջին չորս տարիների ընթացքում չի արձանագրվել:

Աղյուսակ 2: Սովորողների թվի համեմատական ցուցանիշը 2020-2024 թվականների համար

	2020-2021 ուս. տարի	2021-2022 ուս. տարի	2022-2023 ուս. տարի	2023-2024 ուս. տարի
ՏԱՐՐԱԿԱՆ	**49**	**51**	**47**	**57**
ՀԻՄԱԿԱՆ	**47**	**49**	**46**	**46**
ԸՆԴԱՄԵՆԸ	**96**	**100**	**93**	**103**

Գծապատկեր 1:



Սովորողների թվաքանակի նվազման պատճառը կապված է բնակավայրի փոփոխության հետ: Սովորողները ընտանիքների հետ տեղափոխվել են Ռուսաստանի Դաշնություն, այլ մարզեր և քաղաքներ: 2023-2024 ուսումնական տարում նկատելի է աշակերտների թվաքանակի աճ:

Աղյուսակ 3. Ըստ դասարանների՝ սովորողների թիվն ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար:

Դասարանների թիվը	2021-2022 ուս. տարի	2022-2023 ուս. տարի	2023-2024 ուս. տարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
1-ին դասարան	16	12	15	աճ
2-րդ դասարան	14	16	12	նվազում
3-րդ դասարան	8	13	16	աճ
4-րդ դասարան	13	6	14	աճ
5-րդ դասարան	13	12	6	նվազում
6-րդ դասարան	10	12	13	աճ
7-րդ դասարան	7	8	12	աճ
8-րդ դասարան	7	7	8	աճ
9-րդ դասարան	12	7	7	անփոփոխ
Ընդամենը	100	93	103	աճ

Աղյուսակ 4. Ընդհանուր տվյալներ սովորողների վերաբերյալ՝ ընթացիկ և նախորդ երկու ուսումնական տարիների համար:

Ցուցանիշը	2020-2021 ուստարի	2021-2022 ուստարի	2022-2023 ուստարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա սկզբին՝ տվյալ ուստարվա սեպտեմբերի 1- ի դրությամբ	86	100	93	նվազում
Սովորողների ընդհանուր թիվը ուսումնական տարվա վերջին՝ տվյալ ուստարվա մայիսի 25-ի դրությամբ	86	100	95	նվազում
Ուսումնական տարվա ընթացքում ընդունված սովորողների թիվը	25	14	19	աճ
Ուսումնական տարվա ընթացքում հեռացած սովորողների թիվը	18	17	17	նվազում

Դպրոցն այս պահին ունի 103 աշակերտ, որոնցից 1-ը՝ ԿԱՊԿՈՒ: Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 0,28 է, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 3,5: Աշակերտ-ուսումնաօժանդակ հարաբերակցությունը՝ 11,8 է:

Աղյուսակ 5. Ավարտական՝ 9-րդ դասարանի սովորողների առաջադիմությունը 2018-2023 թթ:

2018-2019 սովորողների թիվը՝ 10			2019–2020 սովորողների թիվը՝ 9			2020-2021 սովորողների թիվը՝ 10			2021-2022 սովորողների թիվը՝ 12			2022-2023 սովորողների թիվը՝ 7		
գերա-զանց	հարվա ծային	միջակ	գերա զանց	հարվա ծային	միջակ	գերա զանց	հարվա ծային	միջակ	գերա զանց	հարվա ծային	միջակ	գերա զանց	հարվածային	միջակ
1	1	8	1	1	7	2	2	6	1	1	10	-	4	3

Գծապատկեր 2:



Աղյուսակ 6: Տվյալներ սովորողների ուսումնառության արդյունքների վերաբերյալ տվյալ ուսումնական տարում

Հիմնական առարկաներ	Սովորողների թիվը		Պետական պարտադիր 2 առարկաներից տարեկան գնահատականների միջինը		4-րդ դասարանում գիտելիքների ստուգման և 9-րդ ավարտական քննությունների միավորների միջինը	
	4-րդ. դաս	9-րդ. դաս	4-րդ. դաս	9-րդ. դաս	4-րդ. դաս	9-րդ. դաս
Հայոց լեզու	6	7	9	6	9	14
Մաթեմատիկա	6	7	9	7	9	15
Հայոց պատմ.	-	7	-	7	-	15
Ֆիզիկա	-	7	-	7	-	15

Աշխարհագրություն	-	7	-	7	-	15
Ռ. լեզու	6	7	9	8	-	19
Անգլերեն	6	7	9	8	-	15
Ֆիզկուլտուրա	6	7	9	9	-	9
Կենսաբանություն	-	7	-	7	-	15
Քիմիա	-	7	-	7	-	-
Գրականություն	-	7	-	7	-	15
ՆԶՊ	-	-	-	7	-	-
Հասարակագիտություն	-	-	-	8	-	-
Համաշխարհ. պատմ.	-	-	-	7	-	-
Ինֆորմատիկա	-	-	-	8	-	-

Աղյուսակ 7: 4-րդ և 9-րդ դասարանում գիտելիքների ստուգման, և պետական ավարտական քննությունների արդյունքների փոփոխության դինամիկայի վերաբերյալ տվյալներ:

Քննական առարկաներ	Քննությունների միջին միավորների փոփոխությունը նախորդ ուսումնական տարվա նկատմամբ՝ ըստ կրթական աստիճանների			
	Քննությունների միջին միավորների աճի տոկոսը		Քննությունների միջին միավորների նվազման տոկոսը	
	4-րդ. դասարան	9-րդ. դասարան	4-րդ. դասարան	9-րդ. դասարան
Հայոց լեզու	9%	անփոփոխ		0,1
Ռ. լեզու		անփոփոխ		0,1
Անգլերեն		8,4%		

Մաթեմատիկա	9%	9,3%		
Հայոց պատմություն		9%		
Աշխարհագրություն		անփոփոխ		
Ֆիզկուլտուրա		անփոփոխ		
Գրականություն		9%		

Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման 2022-2023 հաշվետվության՝ հաստատության սովորողների առաջադիմությունը նկարագրող ցուցանիշները հետևյալն են՝

Աղյուսակ 8: Սովորողների առաջադիմության ցուցանիշներ 3 տարիների հաշվարկով:

Ցուցանիշ	2020-2021 ուս.տարի		2021-2022 ուս.տարի		2022-2023 ուս.տարի	
	1- 4-րդ դաս.	5- 9-րդ դաս	1-4-րդ դաս.	5-9-րդ դաս	1- 4-րդ դաս	5- 9-րդ դաս
գերազանց առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	12 20,5%	5 70,5%	14 27%	5 10,2%	22 6.4%	5 անփոփոխ
ցածր առաջադիմությամբ սովորողների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների, ավարտման գործակիցը՝ ըստ կրթական աստիճանների	9 18%	40/ 55%	7 13,7%	32 65,3%	3 նվազում	10 նվազում
Ավարտման գործակից՝ ըստ կրթական աստիճանների	100%	100%	100%	100%	100%	100%

երկտարեցիների թիվը և տոկոսը՝ ըստ կրթական աստիճանների	1 1%	-	1 1%	-	երկտարեց չկա	երկտարեց չկա
հիմնական դպրոցն ավարտած սովորողներից նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններ ընդունվածների թիվը և տոկոսը	-	5 31%	-	4 33,3%		2 29%
հիմնական դպրոցը ավարտած սովորողների թիվը և տոկոսը, ովքեր ուսումը շարունակում են ավագ դպրոցներում կամ ավագ դասարաններում	-	10 62%	-	8 66,6%		5 71%
ուսումնական տարվա ընթացքում տվյալ ուսումնական հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը, այդ թվում՝ այլ հաստատություններ, այլ բնակավայր կամ այլ երկիր ընտանիքի տեղափոխման պատճառով	1 2%	2 4%	2 3,9%	-	-	-
ուսումնական տարվա ընթացքում տվյալ ուսումնական հաստատությունից այլ հաստատություն տեղափոխված սովորողների թիվը և տոկոսը, այդ թվում՝ այլ հաստատություններ, այլ բնակավայր կամ այլ երկիր ընտանիքի տեղափոխման պատճառով	1 1%	2 4%	2 3,9%	-	չկա	չկա

Ելնելով աղյուսակների վերլուծությունից՝ հաստատությունը վերջին տարիներին ցուցաբերել է բավարար արդյունք: Տարրական դպրոցում կա և պահպանվել է սովորողների առաջադիմությունը, սակայն նույն պատկերը չկա հիմնական դպրոցում, չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ աղյուսակում այն անփոփոխ է: Ուստի, ուսումնական հաստատությունը խնդիր ունի բարելավել սովորողների առաջադիմությունն ու կրթության որակը: Աղյուսակից պարզ է դառնում, որ հիմնական դպրոցն ավարտող աշակերտների 71 %-ը կրթության շարունակականությունը տեսնում է ավագ դպրոցում, իսկ 29%-ը՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական հաստատություններում: Դպրոցը պետք է ջանասիրաբար ու հետևողական աշխատանքներ տանի թե՛ ծնողների, թե՛ աշակերտների հետ նրանց ինքնագիտակցության բարձրացման, և ուսման նկատմամբ աշակերտների շրջանում սեր և հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ:

Սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրման և առաջարկների հիման վրա նախատեսվում է 2023-2024 ուսումնական տարվանից սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով դպրոցում կազմակերպել երկարօրյա ուսուցում:

Երկարօրյա ուսուցման կազմակերպման նպատակով դրվելու են հետևյալ խնդիրները.

1. տնային պայմաններում երեխային կրթական աջակցություն տրամադրելու անհնարինության դեպքում այդ գործընթացը կազմակերպել դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա,
2. արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,
3. ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողներին մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ:

1.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՒ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ, ՀԱՄԱՅՆՔԻ, ՇԱՀԱՌՈՒ ԽՄԲԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐՆ ՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուսումնական հաստատության գործունեությունը կարգավորվում է հանրակրթության ոլորտում ազգային օրենսդրությամբ և արտացոլում է պետության կրթական քաղաքականության միտումները՝ ձևավորելով պետության ու համայնքի զարգացմամբ մտահոգ ու նախաձեռնող սերունդ: Ուսումնական հաստատությունը համագործակցում է պետական ու համայնքային մարմինների հետ, ինչը դրսևորվում է վերջիններիս նախաձեռնություններում ներգրավմամբ: Համայնքի և ուսումնական հաստատության համագործակցությամբ կազմակերպվում են շաբաթօրյակներ, ծառատունկ, մշակութային միջոցառումներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը, սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում են պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Զարգացման ծրագիրը նպատակադրում է ապահովել գոյություն ունեցող միջոցառումների շարունակականությունը՝ միևնույն ժամանակ խթանելով դպրոցի ուսումնամանկավարժական և աշակերտական համակազմի նախաձեռնողականությունը նոր միջոցառումների կազմակերպման ուղղությամբ:

Ինչպես բոլոր հանրակրթական դպրոցները, այնպես էլ Արտենիի հիմնական դպրոցը, սերտորեն համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳՄՍՆ-ի, Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի, Թալինի համայնքապետարանի և Արտենի բնակավայրի վարչական ղեկավարի, ՀՀ ՆԳՆ ոստիկանության, փրկարար ծառայության, ՀՀ պաշտպանության նախարարության, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԳԹԿ-ի ,ԿՏԱԿ-ի , Արագածոտնի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հետ: Դպրոցը նաև համագործակցել է «Խաղաղության կորպուս» կազմակերպության հետ և ունեցել է 4 կամավոր: Կամավորի օժանդակությամբ և ամիջական միջամտությամբ ձեռք են բերվել դպրոցին անհրաժեշտ գույք և պարագաներ: Դպրոցում գործել է անգլերենի «ԱՔՍԵՍ» խմբակը: Խմբակ են հաճախել ոչ միայն «Արտենիի հիմանական դպրոց»-ի սանները, այլ նաև Արտենի բնակավայրի 13-ից 15 տարեկան բոլոր երեխաները: «Հայաստանի

մանուկներ» հիմնադրամի աջակցությամբ դպրոցում գործել են «Մասնագիտական կողմնորոշում», «Ազգագրություն», թատերական, ինժեներաճարտարագիտական, «Առողջ ապրելակերպ» խմբակները: Այս խմբակներում էլ ներգրավված են Արտենի բնակավայրի բոլոր թիրախային խմբերի երեխաները: 2023-ից գործում է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի «Հետաքրքրաշարժ մաթեմատիկա» խմբակը: «Վորլդ Վիժն» կազմակերպությունը դպրոցում ունեցել է «Խաղաղության ճանապարհ» խմբակը: «Վորլդ Վիժն»-ի աջակցությամբ դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիան (հարկ է նշել, որ ներքին հարդարման աշխատանքներն իրականացրել է «Վորլդ Վիժն»-ը):

Համայնքի և շահառու խմբերի կարիքներին «Զարգացման ծրագիր»-ը համապատասխանեցնելու նպատակով իրականացվել են քննարկումներ և մտքերի փոխանակում մանկավարժական, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ:

1.3 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ, ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ և ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Համաձայն դպրոցի կողմից տրամադրած տվյալների՝ դպրոցը հիմնադրվել է 1955 թվականին: 1955-ից մինչև 1989 թվականները կրթությունը ութամյա է եղել: 1990-ից մինչև 2003 թվականներին դպրոցն իրականացրել է միջնակարգ կրթություն, 2003-ից ի վեր իրականցվում է հիմնական կրթություն: Դպրոցը նախատեսված է 200 աշակերտի համար: Այն երկհարկանի մասնաշենք է: Ուսումնական հաստատության շենքային տարածքն ընդգրկում է 9 դասասենյակ, 2 առանձնասենյակ, 2 առարկայական լսարաններ, 1 տեխնիկական նշանակության սենյակ, 1 ճաշարան, 1 հանդիսությունների դահլիճ՝ հարմարեցված մարզադահլիճին, 1 լաբորատորիա (քիմիա, կենսաբանություն), 1 գրադարան (վերջին անգամ գրադարանային ֆոնդը նոր գրականությամբ համալրվել է 2022 թվականին), 1 «Արմաթ» լաբորատորիա՝ հարմարեցված ինֆորմատիկայի դասասենյակին, 2 սանհանգույց, նկուղում գտնվող հակաճառագայթային թաքստոց, որը միակն է համայնքում և վերանորոգման կարիք ունի: Դպրոցի տարածքում, մասնավորապես, հողամասում են գտնվում նախկին արհեստանոցի կիսաքանդ, այրված շինությունը և նախկին 2 զուգարանները, 2 մարզահրապարակ, 1 դեկորատիվ բուսական այգի: Տանիքը և պատուհանները նորոգված են:

Դպրոցը 3 տարի է՝ գազաֆիկացված է, ջեռուցումը լոկալ է: Դպրոցի միջանցքները բարեկարգ են, վերանորոգվել են պետական ֆինանսավորմամբ: Վերանորոգված են նաև վարչական ու տեխնիկական նշանակության սենյակները: Դպրոցի նախկին սաներից երեքը՝ Ռուբիկ Ալեքսանյանը, Ղուկաս Պողոսյանը և Սամվել Սահարյանը անմահացել են Արցախյան 44-օրյա պատերազմում՝ ՀՀ սահմանները պաշտպանելիս: Նրանց անուններով անվանակոչվել ու վերանորոգվել են 3 դասասենյակներ: Դպրոցի շենքային պայմանները բավարար վիճակում են: Դպրոցի դահլիճը ծառայում է թե՛ որպես հանդիսությունների դահլիճ, թե՛ որպես մարզադահլիճ: Դպրոցը համալրված է աշակերտական գույքով՝ սեղան, աթոռ, գրատախտակ, պահարան, սակայն պահարանների մի մասը հին են, մաշված և ենթակա են նորով փոխարինման: Դպրոցի բակում «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի աջակցությամբ հիմնվել է խաղահրապարակ և մարզահրապարակ, որտեղ տեղադրված են մարզասարքեր և խաղասարքեր, սակայն խաղահրապարակի տարածքը բարեկարգման կարիք ունի:

Աղյուսակ 9: Ուսումնական հաստատության շենքեր և հարմարություններն ըստ 31.08.2022 թվականի դիտարկման

N	Շինությունների և հարմարությունների անվանումը	Քանակը	Մակերեսը (մ2)	Ծավալը (մ3)
1	շենք(եր)	1	1268,88	11516,8
2	առանձնասենյակներ	2	56,02	193,44
3	դասարաններ	9	363,35	1341,36
4	առարկայական լսարաններ	2	60,02	356,9
5	լաբորատորիաններ	1	56,2	192,09
6	արհեստանոցներ	-	-	-
7	մարզադահլիճ/հանդիսությունների դահլիճ	1	89,04	445,2
8	բուժկետ	-	-	-
9	ճաշարան	1	43,2	-
10	հանդերձարան(ներ)	-	-	-
11	զուգարան(ներ)	2	33,14	117,05
12	տեխնիկական նշանակության այլ սենյակներ	1	43,68	157,2
13	մարզահրապարակ(ներ)	2	541,2	-
14	համակարգիչներ	3	-	-
15	համակարգչային այլ տեխնիկա	4	-	-
16	հեռախոսներ	3	-	-

17	ջեռուցվող տարածքներ	-	1268,88	-
18	ջեռուցման տեսակը	լոկալ գազ	1268,88	-
19	դեկորատիվ, բուսական այգիներ	1	200	-
Տվյալներ դասասենյակների վերաբերյալ				
1	1-ին դասասենյակ	1	43,2	
2	2-րդ դասասենյակ	1	41,44	
3	3-րդ դասասենյակ	1	43,2	
4	4-րդ դասասենյակ	1	43,2	
5	5-րդ դասասենյակ	1	43,2	
6	6-րդ դասասենյակ	1	43,2	
7	7-րդ դասասենյակ	1	43,2	
8	8-րդ դասասենյակ	1	30,24	
9	9-րդ դասասենյակ	1	43,2	

Դասասենյակների մակերեսը յուրաքանչյուր դասարանի աշակերտ թվի համեմատ ավելի է: Մուտքի աստիճաններին կից կառուցված է թեքահարթակ, սանհանգույցում տեղադրված է բռնակ:

Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման 2022-2023 հաշվետվության տվյալներ հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճների վերաբերյալ:

Աղյուսակ 10: Հաստատության ուսումնական լաբորատորիաների, կաբինետների և դահլիճներ

Լաբորատորիաներ, կաբինետներ և դահլիճներ	Վերանորոգման կարիքը	Առկա գույքը, լաբորատոր սարքավորումները, պարագաները (թվարկել հիմնականը)	Ուսումնա-նյութական, ուսումնա-դիդակտիկ նյութերը	Լրացուցիչ, գույքի, սարքավորումների, պարագաների նյութերի կարիքը
Քիմիայի, և կենսաբանության լաբորատորիա	ունի	Պաստառներ, էլեկտրացույց սարքեր, ուժաչափեր		Սպիրտայրոցներ, կոլբաներ, նյութեր, կշեռք, կշռաքարեր, էբոնիտե և ապակե ձողեր, չափագլաններ, չափիչ սարքեր, մանրադիտակ, մուլաժներ, պաստառներ, բաշխիչ նյութեր
Պատմության կաբինետ	չունի			
Ռազմագիտության կաբինետ	ունի			շնչառական դիմակներ, ԱԲՕ
Համակարգչային լաբորատորիա, կաբինետ	ունի	1 հատ համակարգիչ	Առարկայական սկավառակներ	էլեկտրոնային գրատախտակ, տպիչ
Արհեստանոց (նշել ինչպիսի)	չունի			Հիմնանորոգման կարիք
Հանդիսությունների դահլիճ	ունի			

Մարզադահլիճ	հարմարեցված	այծիկ, թենիսի, ֆուտբոլի, վոլեյբոլի համակազմ, մարզական աստիճան, օղակներ, պարաններ		ներքնակ, մարզ. գերանման գլ. պարան

Դպրոցի լաբորատորիան ունի վերանորոգման և գույքով համալրման կարիք: Մարզադահլիճը միաժամանակ հարմարեցված է որպես միջոցառումների դահլիճ օգտագործմանը: Դպրոցը ժամանակակից պահանջներին համապատասխան առանձին մարզադահլիճի կարիք ունի: 2017 թվականին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի ֆինանսական աջակցությամբ դպրոցում ստեղծվել է ճաշարան, ատամակայան:

Դպրոցը բուժկետ և ուսուցչանոց չունի, քանի որ սենյակները չեն բավարարում: Համակարգչային կաբինետը և «Արմաթ» լաբորատորիան մեկ դասասենյակում են: Դպրոցն ունի ՆԶՊ դասասենյակ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ

Կրթական ծրագրերի իրականացման համար դպրոցի նյութատեխնիկական բազան հագեցած չէ: Դպրոցի նիստերի դահլիճն ու սպորտդահլիճը տեղակայված են 1 ընդհանուր սենյակում: Բոլոր դասասենյակներն ապահոված են սեղաններով, նստարաններով, գրատախտակներով և պահարաններով: Դպրոցը հագեցած չէ համապատասխան մարզական գույքով:

Աղյուսակ 11: Հաշվետու տարվա 01/01/2023 դրությամբ դպրոցն ունի

Գույքի անվանումը	Ստացման տարեթիվը	Գույքի քանակը
էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակ	2023	1
համակարգիչ	-	3
տպիչ	-	3
լուսարձրիչ (պրոյեկտոր)	-	3
նոթբուք	-	1
դաշնամուր	-	1
ատվուդի մեքենա	2018	1
իմպուլսի պահպանման օրենքը բնորոշող փորձասարք	2018	1
մաթեմաթիկական ճոճանակ	2018	1
օպտոէլեկտրոնային միլիվայրկյանաչափ կենսաչափ	2018	1
գազի մեմբրանային հաշվիչ A-25K	2019	1
գազի այրիչ Burnur GNG 90	2019	1

մոնիտոր Piliys	2021	1
մարզական սարքավորում	2022	1
զուգափայտ(դրսում)	2022	1
նստարան(դրսում)	2022	1
ճոճանակ(դրսում)	2022	1
պտույտ (դրսում)	2022	1
սահարան(դրսում)	2022	1

Վերոնշյալ նյութատեխնիկական բազան գտնվում է սարքին վիճակում և ենթակա է շահագործման: Դպրոցում առկա դիդակտիկ նյութերը կիրառվում են ուսումնական գործընթացը կազմակերպելիս: Երեք համակարգիչներից մեկը շահագործվում է վարչական գործառույթների իրականացման նպատակով, այն տեղադրված է տնօրենի սենյակում, մյուսը տեղադրված է գրադարանում, երրորդն էլ՝ համակարգչային դասասենյակում է: Դրանք դասապրոցեսում չեն կիրառվում: Դասապրոցեսի ընթացքում աշակերտներն ու ուսուցիչներն անհրաժեշտության դեպքում օգտագործում են հեռախոսներ: Էլեկտոնային ինտերակտիվ գրատախտակը դեռևս մեծ հաճախականությամբ չի կիրառվում: Լուսացրիչները օգտագործվում են ցուցադրական դասերի ժամանակ:

2017 թվականին «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցներով ձեռք է բերվել ճաշարանի գույքը, իսկ պահեստի գույքը և վերանորոգման համար անհրաժեշտ որոշ նյութեր տրամադրել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Դպրոցի (ֆիզիկական) ուսումնական միջավայրը 2 հարկերում էլ հարմարավետ է: Ապահովված է լոկալ ջեռուցմամբ: Դպրոցի 1-ին հարկի միջանցքների պատերը հագեցած են նկարներով, ուսումնական պաստառներով: 2-րդ հարկ տանող աստիճանների երկայնքով փակցված են գեղեցիկ նկարներ: Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը: Դպրոցն ընդգրկված է ՄԱԿ-Ի Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագրում, որը տարրական դպրոցի սովորողներին ապահովում է ամենօրյա տաք սննդով: Տարրական դասարանների աշակերտների անվճար սննդի կազմակերպման համար ստեղծվել են բավարար պայմաններ (խոհանոց և ճաշարան): Դպրոցում կազմակերպվում են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ՝ նվիրված Գիտելիքի օրվան, Անկախության օրվան, Ուսուցչի օրվան, Բերքի տոնին, «Ոսկե» աշուն խորագրով, Հայոց բանակին նվիրված միջոցառում, Թումանյանական օրեր խորագրով, Գրքին նվիրված, Հուշ-միջոցառում՝ նվիրված հայոց ցեղասպանությանը, Ամանորի հանդես, Վերջին դաս և այլն: Դպրոցի սովորողները մասնակցում են տարբեր արտադասարանական և արտադպրոցական խմբակների: Դպրոցում գործում է «Արմաթ» ինժեներական լաբորատորիա՝ 5-ից 9-րդ դասարանների աշակերտների համար և ինժեներատեխնիկական խմբակ 3-րդից 4-րդ դասարանցիների համար: Դպրոցում առկա է ուսումնամեթոդական համապատասխան գրականություն և լրացուցիչ նյութեր ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատելու նպատակով, սակայն դպրոցում սենյակների քանակի քիչ լինելու պատճառով հնարավորություն չկա ստեղծելու ռեսուրս-սենյակ, ինչն իր հերթին դժվարացնում է արդյունավետ աշխատանքը: Դպրոցում համերաշխ մթնոլորտ է. սովորողների և ուսուցիչների, ուսուցիչների և ուսուցիչների, ծնողների և ուսուցիչների միջև չկան լարված և անառողջ հարաբերություններ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Դպրոցում աշխատում է 27 մանկավարժ, երկուսը՝ միջին մասնագիտական, մեկը՝ միջնակարգ կրթությամբ: Դպրոցում գործում են 3 առարկայական մասնախմբեր՝ տարրական կրթություն և ընդհանուր զարգացման առարկաներ, հումանիտար առարկաներ, բնագիտական առարկաներ:

Հումանիտար առարկաների մեթոդական միավորումը բաղկացած է 6 անդամից: Ուսումնական տարվա սկզբին կազմվել են տարեկան թեմատիկ պլանները, ներկայացվել են տնօրենի հաստատմանը: 2022-2023 ուսումնական տարվա ընթացքում հրավիրվել է 10 նիստ՝ ըստ ժամանակացույցի և օրակարգային հարցերի: Տրվել են գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքներ՝ շաբաթական ժամաքանակին համապատասխան, տարեվերջին անցկացվել են ստուգարքներ: Բոլոր հումանիտար առարկաներից անցկացվել են դասալսումներ:

Բնագիտական առարկաների մեթոդական միավորումը բաղկացած է 6 անդամից: Ուսումանական տարվա սկզբին կազմվել են տարեկան թեմատիկ պլանները և ներկայացվել տնօրենի հաստատմանը: Ուսումնական տարվա ընթացքում հրավիրվել է 10 նիստ, համաձայն ժամանակացույցի և օրակարգային հարցերի: Ընթերցվել են մեթոդական զեկույցներ՝ «ՏՀՏ գործիքների կիրառումը կենսաբանության և քիմիայի դասաժամերին և գործնական աշխատանքները ֆիզիկայի ժամերին»: Կազմակերպվել են բաց դասեր «Մարսողական օրգանների հիգիենան» և «Կովալենտ կապ» թեմաներով: Շաբաթական ժամաքանակին համապատասխան տրվել են գործնական և թեմատիկ գրավոր աշխատանքներ:

Տարրական կրթություն և ընդհանուր զարգացման առարկաների մեթոդական միավորման ունի 8 անդամ: Տարեսկզբին կազմվել են տարեկան թեմատիկ պլանները և ներկայացվել տնօրենի հաստատմանը: Մեթոդմիավորումը կազմել է «Ծնող-աշակերտ հաղորդակցության գաղտնիքները» և «Ուսուցիչ-ծնող համագործակցության անհրաժեշտությունը դպրոցական գործընթացում» մեթոդական զեկուցումներ: Տարվա ընթացքում տրվել են թեմատիկ և գործնական աշխատանքներ շաբաթական ժամաքանակին համապատասխան:

Դպրոցում ԿԱՊԿ ունեցող աշակերտների ուսուցումն արդյունավետ կազմակերպելու նպատակով բազմամասնագիտական թիմը (սոց. մակավարժ, հոգեբան, ուսուցչի օգնական, հատուկ մակավարժ) ըստ դասացուցակի իր ամենօրյա աշխատանք է կատարում այդ երեխաների հետ:

Դպրոցում այս պահին բոլոր առարկաների գծով կան մասնագետներ, սակայն տեխնոլոգիայի և ՆԶՊ ուսուցիչներն ունեն միջին մասնագիտական որակավորում, իսկ «Եզդիերեն» խմբակի ուսուցիչն ունի միջնակարգ կրթություն: Նշված 2 ուսուցիչները մասնակցել են կամավոր ատեստավորմանը և կշարունակեն ուսուցչական գործունեությունը, քանի որ հաղթահարել են անցողիկ շեմը:

Աղյուսակ 12: Ուսումնական հաստատության հաստիքներ, մարդկային ռեսուրսներ 03. 10. 2023 թվականի դրությամբ

N	Հաստիքներ	Աշխատողների թիվը	Դրույքների թիվը
1	վարչական աշխատող	2	1,5
2	մանկավարժներ	17	12,19
3	մանկավարժական հաստիքներ (զինղեկ, կազմակերպիչ, լոգոպեդ, սոց. մանկավարժ, հոգեբան և այլն)	6	4,5
4	հաշվապահ	1	0,75
5	ուսումնաօժանդակ անձնակազմ	8	5,75
6	սեզոնային աշխատող, խոհարար		2
			0,5
7	Ընդամենը	34	

Դպրոցի տարածքում ուսուցչական անձնակազմի ինքնակրթության բարենպաստ միջավայրի ստեղծման կարիք կա: Մանկավարժները հնարավորություն չունեն ազատ ժամերին կատարել իրենց պարտականություններն ու հավուր պատշաճի պատրաստվել դասերին: Ուսումնական հաստատությունն ունի որակյալ ուսուցչական անձնակազմ, սակայն որքան էլ որակյալ լինի համակազմը, մերօրյա ուսուցիչն իր գիտելիքները, վարպետությունը և կարողունակությունները հարստացնելու խնդիրներ ունի, և այդ նպատակով դպրոցի անձնակազմի արժևորման և խրախուսման ուղղությամբ նախատեսում եմ ներդնել մի համակարգ որի հիմքում ընկած կլինեն աշխատողի ինքնակրթությունը, մասնագիտական զարգացումը, նախագծային

աշխատանքների որակը, տարբեր միջոցառումների կազմակերպումը և նախաձեռնողականությունը գնահատող չափանիշներ, ինչպես նաև տարբեր մրցույթներում սովորողների գրանցած արդյունքները, որի արյունքում ուսուցիչը կարժանանա տարբեր պարգևների՝ շնորհակալագրեր, պատվոգրեր, դրամական խրախուսման միջոցներ:

Աղյուսակ 13: Ուսուցիչների տարիքային կազմը ընթացիկ և նախորդ երկու տարիների ընթացքում

Տարիքային կազմը	2020-2021	2021-2022	2022-2023	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Մինչև 30 տարեկան	3 ուսուցիչ	3 ուսուցիչ	3 ուսուցիչ	անփոփոխ
31-40 տարեկան	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	անփոփոխ
41-50 տարեկան	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	անփոփոխ
51-55 տարեկան	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	7 ուսուցիչ	անփոփոխ
56 և ավելի տարեկան	3 ուսուցիչ	3 ուսուցիչ	3 ուսուցիչ	անփոփոխ

Աղյուսակ 14. Համաձայն ՀՀ Արագածոտն մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման 2022-2023 հաշվետվության, տվյալներ ուսուցչական անձնակազմի և նրանց գործունեության վերաբերյալ

բարձրագույն մանկավարժական որակավորում ունեցող ուսուցիչների թիվը	24
ըստ մասնագիտության դասավանդող ուսուցիչների թիվը	24
տարակարգ ունեցող ուսուցիչների թիվը	0
գիտական կոչում ունեցող ուսուցիչների թիվը	0
նախարարության կողմից երաշխավորված կամ այլ կազմակերպություններում վերջին 3 տարում վերապատրաստում անցած ուսուցիչների թիվը	11
ուսուցիչների միջին տարիքը	43

որպես ուսուցիչ վերապատրաստող (դասախոս) վերապատրաստված և վերապատրաստման դասընթացներ վարող ուսուցիչների թիվը	0
միջազգային ու հանրապետական պարբերականներում (ամսագրերում) հոդվածներ, մասնագիտական հրապարակումներ, ինչպես նաև դասագրքեր, մեթոդական ձեռնարկներ, գիտամանկավարժական, հեղինակային և այլ աշխատություններ ունեցող ուսուցիչների թիվը	0
դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	27 100%
ուսումնական գործընթացում տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ, այդ թվում՝ ինտերնետ, կիրառող ուսուցիչների թիվը և տոկոսը	27 100%
սովորողներին համակարգիչների կիրառմամբ տնային աշխատանքներ հանձնարարող ուսուցիչների թիվը և տոկոսը	23 88%
ուսումնական տարվա ընթացքում հաստատությունում անցկացվող ցուցադրական բաց դասերի թիվը	5
ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքների թիվը	0

Վերլուծելով վերոնշյալ աղյուսակը, պարզ է դառնում, որ ուսումնական հաստատությունում աշխատող ուսուցիչների մեծամասնությունը ունեն բարձրագույն կրթություն և դասավանդում են ըստ մասնագիրտությունների: Գիտական կոչում և տարակարգ ունեցող ուսուցիչներ չկան: Նրանցից տասնմեկը վերջին 3 տարում անցել է պարտադիր վերապատրաստում նախարարության կողմից երաշխավորված կազմակերպություններում: Վերապատրաստող և գիտական հոդվածներ ունեցող ուսուցիչներ չկան: Ուսուցիչների միջին տարիքը 43-ն է, տարիքային կազմը վերջին 3 տարիների ընթացքում չի փոփոխվել: Համաձայն աղյուսակի՝ ՏՀՏ տեխնոլոգիաներ կիրառում են բոլորը, սակայն ուսուցիչների հետ հանդիպման ժամանակ պարզ դարձավ, որ ոչ բոլոր ուսուցիչներն են կիրառում ՏՀՏ դասապրոցեսի ընթացքում, և դա պայմանավորված է տարբեր գործոններով՝ կապի բացակայություն, համակարգիչների սակավություն, ինչպես նաև՝ ՏՀՏ-ին չտիրապետելու ունակություն:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ԶԱՓՈՐՈՇԶԱՑԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Ուսումնական հաստատությունը սովորողներին ընձեռում է հետևյալ հնարավորությունները. հանրակրթության ձեռքբերում, անձի ինքնադրսևորման, ինքնաարտահայտման ու ինքնազարգացման նպաստավոր միջավայր, մարզամշակութային կյանքի ներգրավվածություն: Դպրոցում նաև իրականացվում է սովորողի անհատական կարիքների, տարիքային առանձնահատկությունների և հետաքրքրությունների վրա հիմնված դասավանդում: Ուսուցիչներն աշխատում են պարտաճանաչ, հետևողական են աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում, համագործակցում են ծնողների հետ: Տարվում են աշխատանքներ ուսման որակը բարելավելու, սովորողների հմտությունները, կարողություններն ու դիրքորոշումները զարգացնելու, առողջությունն ու անվտանգությունը պահպանելու ուղղությամբ: Կազմակերպվում են դասարանական, արտադասարանական ու արտադպրոցական նպատակային միջոցառումներ, որոնց շնորհիվ սովորողները մշակութապես զարգանում են ու ընդլայնում են իրենց մտահորիզոնը: Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի, խորհրդակցական մարմինների անդամների, հոգեբանի և դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ, սակայն դրանք համապարփակ բնույթ չեն կրում: Դպրոցից առարկայական օլիմպիադայի մասնակիցներ կան, սակայն չեն հաղթահարում տարածքային փուլը և մարզային փուլին մասնակցելու հնարավորություն չեն ունենում:

2023-2024 ուսումնական տարվանից դպրոցի 2-րդ, 5-րդ և 7-րդ դասարանների ուսումնական պլանը կազմվել է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշչի համաձայն:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ և ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դպրոցում բաց դասեր կազմակերպելիս կիրառվում են ժամանակակից մեթոդներ և ՏՀՏ. այդ ուղղությամբ դպրոցի հնարավորությունները զարգացնելու նպատակով հետևողականորեն ձեռք են բերվել նոր տեխնիկա և համակարգչային որոշ միջոցներ: Հաշվի առնելով ինտերակտիվ դասերի կազմակերպման անհրաժեշտությունը՝ 2023 թվականին ձեռք բերված ինտերակտիվ գրատախտակը հնարավորություն կտա դասապրոցեսը կազմակերպել ՏՀՏ միջոցների կիրառմամբ: Կարևոր է ՏՀՏ գործիքների կիրառումը ոչ միայն դասապրոցեսում, այլ նաև աշխատանքային գործընթացում: Դպրոցի մանկավարժական աշխատողները պարբերաբար օգտվում են էլեկտրոնային հարթակներից, իրենց աշխատանքի կարևոր բաղադրիչներից է emis.am, ktak.am, kznak.am, atc.am հարթակների կիրառումը: ՏՀՏ-ի կիրառմամբ, կարիքներից ելենելով, կազամակերպվում են հեռավար հանդիպումներ (ծնողական, կառավարման խորհրդի անդամների հետ) ու հեռավար ուսուցում: Դպրոցում ուսումնական պլանով սահմանված բոլոր առարկաների համար գործում է դասաժամերը տեղեկատվական տեխնոլոգիաներով վարելու հնարավորություն, սակայն բացակայում է համացանցից օգտվելու հնարավորությունը, քանի որ ֆիքսված ինտերնետային կապն ակտիվ է տնօրենի սենյակում և գրադարանում: Ուսուցիչները բոլորովին վերջերս ԿԶՆԱԿ հիմնադրամի կողմից հանրակրթական դպրոցում ՀՊԶ-ի ներդրման վերապատրաստում են անցել, այն անցկացվել է Microsoft Teams կրթական հարթակի միջոցով:

Դպրոցի վարչական աշխատողների կողմից տեղեկատվական տեխնոլոգիաները կիրառվում են emis.am համակարգում մշտադիտարկումներ իրականացնելու համար: Դպրոցի և՛ ֆինանսատնտեսական գործունեությունը, և՛ փաստաթղթաշրջանառությունը իրականացվում է տեղեկատվական տեխնոլոգիաների միջոցով:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՑԻՆ ԱՐԺԵՔԱՑԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Արտենիի հիմնական դպրոցում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը: Ըստ ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման հաշվետվության՝ հաստատությունում սովորող ազգային փոքրամասնությունների երեխաների թիվը 2022 թվականի դրությամբ տասն է եղել: Նրանցից երկուսը ընդգրկված են եղել աշակերտական խորհրդում: Դպրոցում երաշխավորված ազգային պատկանելիության հիմքով խտրականության ցանկացած դրսևորման բացառում ինչպես ուսումնական գործընթացում, այնպես էլ՝ առօրյա կյանքում և հարաբերություններում: Իրականացվում է սովորողի անհատական կարիքների, տարիքային առանձնահատկությունների և հետաքրքրությունների վրա հիմնված դասավանդում:

Սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները: Դպրոցում հարգվում են թե ծնողական, թե աշակերտական և թե ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները:

Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ պայմանները:

Վարչական աշխատակազմն աշխատում է ժողովրդավարական աշխատաոճով: Ուսուցիչները ժամանակին իրազեկվում են օրենսդրական փոփոխություններին, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Արագածոտնի մարզպետարանի որոշումներին ու կարգադրություններին:

Ծնողները վստահում են մանկավարժական կոլեկտիվին, համագործակցում նրա հետ, իրենց հուզող հարցերի վերաբերյալ առաջարկներ են անում, սակայն, չեմ վարանում նշել, որ զբաղվածության և ընտանիքի հոգսը իրենց ուսերին ունենալու պատճառով ոչ միշտ են կարողանում ակտիվություն ցուցաբերել: Մանկավարժական կոլեկտիվը ծնողներին մշտապես տեղյակ է պահում նրանց երեխաների ուսումնական և դաստիարակչական խնդիրներին, դպրոցի կարգապահական կանոններին:

Համայնքը շարունակական աջակցություն է ցուցաբերում հաստատությանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՒ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Աշխատակազմի նկատմամբ վարվող քաղաքականությունը յուրաքանչյուր գործընթացում կարևոր դերակատարություն ունի: Դպրոցի անձնակազմի կառավարման գործընթացների արդյունավետության կարևորությունը անմիջականորեն բխում է դպրոցի տնօրենի վարած կադրային քաղաքականությունից: Ուսումնական հաստատությունը համալրվել է նոր կադրերով, ինչը ենթադրում է անձնակազմի երիտասարդացում, սակայն նրանց թիվը չի գերազանցում երեքը: Սահմանված կարգով մանկավարժական անձնակազմը ատեստավորվում է, հաստատությունը տարեկան կտրվածքով իրականացնում է մանկավարժների աշխատանքի որակի գնահատման ուսումնասիրություններ: Անձնակազմի գործունեության խրախուսման մեթոդներ (պաշտոնական աճ, տարատեսակ պարգևատրումներ, մասնագիտական վերապատրաստումներ, տարակարգի ստացում, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում՝ «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասվար» և այլ անվանակարգերի սահմանում) դպրոցի կողմից տրամադրված տեղեկատվության մեջ առկա չէ, ուստի դրա առնչությամբ վերլուծությունը, ըստ իս, անարդյունավետ է:

Թվարկված բոլոր միջոցառումներն էլ շատ կարևոր են, փոխկապակցված և միմյանց լրացնող, և որևէ ուղղությամբ միջոցառումների բացակայությունը կարող է շղթայաբար հարվածել անձնակազմի կառավարման բնագավառում կատարված մնացած միջոցառումների արդյունավետությանը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում:

Աղյուսակ 15: Խորհրդակցական մարմիններ

1	2	3	4
կառավարման խորհուրդ	մանկավարժական խորհուրդ	ծնողական խորհուրդ	աշակերտական խորհուրդ
9 անդամ	27 անդամ	9 անդամ	12 անդամ

Դպրոցական խորհուրդների ստեղծման ամենագլխավոր շարժառիթը դպրոցական կառավարումը տեղական, դպրոցական խորհուրդների միջոցով կազմակերպելն է, որը միտում ունի ապահովել համայնքի մասնակցությունը և զարգացնելու դպրոցի ժողովրդավարական կառավարման կազմակերպումը՝ ներառելով մանկավարժներին, ծնողներին, աշակերտներին՝ դպրոցի կառավարման գործընթացին նրանց ակտիվ մասնակցության ակնկալիքով:

Արտենիի հիմնական դպրոցում գործում են բոլոր խորհուրդները: Օրինակ՝ Կառավարման խորհրդի հետ համագործակցության նպատակն է նպաստել դպրոցներում ժողովրդավարական կառավարմանը և որոշումների կայացմանը՝ դպրոցների խնդիրների թափանցիկ և օբյեկտիվ լուծումներ գտնելու նպատակով:

Կրթության որակը բարելավելու նպատակով անհրաժեշտ ու կարևոր է ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-ծնող, դպրոց-համայնք կապը, և այդ նպատակի իրագործման համար առաջիկա հինգ տարիների ընթացքում նախատեսում

եմ աշակերտների և ծնողների համար ներդնել մանկավարժական աշխատողների գործունեությունը գնահատող գործիքակազմ, որը կիրականացվի ուսումնական տարվա մեջ երկու անգամ:

Հաստատության կառավարման խորհուրդը 9 անդամից բաղկացած կոլեգիալ մարմին է: Խորհրդի կազմում ընդգրկված են Մանկավարժական խորհրդի երկու անդամներ, Ծնողական խորհրդի երկու անդամներ, մեկը՝ բարձրագույն կրթությամբ, մյուսը՝ միջնակարգ: Մարզպետարանի կողմից ներկայացված 3 անդամներ, երկուսը՝ բարձրագույն, մեկը՝ միջնակարգ կրթությամբ: Համայնքը ներկայացնող մեկ անդամ, և ՀՀ ԿԳՄՍՆ-ը ներկայացնող մեկ անդամ: Այն կանոնավոր կերպով, եռամսյակը մեկ, կազմակերպել է նիստեր: Սեփական նախաձեռնությամբ նաև գումարել է արտահերթ նիստեր: Կառավարման խորհուրդը հաստատել է դպրոցի կազմակերպական կառուցվածքը, քննարկել է ամենամյա ծախսերի նախահաշիվը, բյուջեի նախագիծը, ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի անցկացման կարգը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակներն ու այն լիազոր մարմնին ներկայացնելու հավանություն է հայտնել: Այն վերահսկել է դպրոցի զարգացման ծրագիրը: Խորհրդի բոլոր նիստերը ըստ ժամանակացույցի արձանագրվել են: Էական և կարևոր եմ համարում կոլեգիալ մարմնի հետ համագործակցային աշխատանքը և վերջինի կողմից դպրոցին վերաբերող բարեփոխումների առաջարկով հանդես գալը: Դպրոցի կառավարման խորհուրդը ներգրավված է դպրոցի կառավարմանը, երաշխավորված է տնօրեն-կառավարման խորհուրդ արդյունավետ համագործակցությունը: Կառավարման խորհրդի հանդիպումների ժամանակ ներկայացվել և քննարկվել են հետևյալ հարցերը.

1. ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը, հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,
2. ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
3. դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը:

Հաստատության մանկավարժական խորհրդում ներառված են բոլոր 27 մանկավարժները: Մանկավարժական խորհրդի նիստերը գումարվում են առնվազն երկու ամիսը մեկ անգամ, անհրաժեշտության դեպքում գումարվում են արտահերթ նիստեր: Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է դպրոցի տնօրենը: Մանկավարժական խորհուրդը քննարկել է հանրակրթական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների հակումներին ու ընդունակություններին, նրանց կյանքի և առողջությանը համապատասխան, սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը, ուսուցման բովանդակության սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների կազմակերպման, արտադասարանական խմբակների ձևավորման հարցեր, և ընդունել է որոշումներ դպրոցի աշխատանքային ռեժիմի և աշխատանքային շաբաթվա տևողության մասին, սովորողների՝ դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին, սովորողներին քննությունների թույլատրելու, գովասանագրերով պարգևատրելու մասին, որևէ առարկայի ուսումնասիրությունից ազատելու մասին, բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին, սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին, շրջանավարտին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, դպրոցի ուսումնական պլանի, դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին, ուսումնական գործընթացին վերաբերող այլ հարցեր:

Հաստատության ծնողական խորհրդում ներառված են 9 ծնողներ ու նրանց օգնականները: Ծնողական խորհուրդը համագործակցում է տնօրինության և աշակերտական խորհրդի հետ, նպաստում սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ծնողական խորհուրդը ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում տնօրինությանը: Կազմակերպում է էքսկուրսիաներ , ճանաչողական այցեր: Ծնողական խորհուրդը աջակցում է դպրոցի ծնողազուրկ և սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին: Կրթության որակի արդյունավետության, ինչպես նաև սովորողների

շրջանում կարգապահական մի շարք հարցերի քննարկումն ու կազմակերպումը իրականացվում է ծնողական համայնքի մասնակցությամբ: Ծնողական և աշակերտական խորհուրդները համագործակցում են միջոցառումների կազմակերպման ժամանակ: Հանդիպումները հիմնականում տեղի են ունեցել ծնողական ժողովների ժամանակ: ՈՒսումնական հաստատության առօրյայից ծնողները տեղեկություններ են ստացել աշակերտներից, ուսուցիչների հետ հեռախոսազրույցների միջոցով, դպրոց այցելելով, կամ էլ՝ հարևանությամբ ապրող ուսուցիչներից: Ծնողական խորհրդի նիստերը կանոնավոր կերպով չեն արձանագրվել: Այս ուղղությամբ տեղին եմ համարում բարձրացնել իրազեկվածությունն ու ծնողների՝ ուսուցման գործընթացում դերակատարության բարձրացմանը:

Աշակերտական խորհրդում ներառված են 7-ից 9-րդ դասարանի 12 աշակերտներ: Ցուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին ընտրությունների միջոցով ձևավորվում է դպրոցի աշակերտական խորհուրդը: Աշակերտական խորհուրդը ինքնավար մարմին է, թեև որպես այդպիսին չի գործում: Աշակերտական խորհրդի միջոցով կազմակերպվում են շաբաթօրյակներ, մշակութային և մարզական միջոցառումներ:

«Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի համաձայն՝ դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդ համագործակցությունն իրականացվելու է կողմերի վերանայված լիազորությունների շրջանակներում՝: Կոլեգիալ կառավարման խորհուրդը կաջակցի զարգացման ծրագրի կատարմանը, կհաստատի դպրոցի կազմակերպական կառուցվածքը, ներքին կարգապահական (այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի) կանոնները, կքննարկի ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման) մասին հաշվետվությունները, ներքին և արտաքին գնահատման արդյունքները:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Դպրոցի ֆինանսավորումն իրականացվում է Հիմնադրի՝ Հայաստանի Հանրապետության կողմից՝ պետական բյուջեի միջոցներից: Մինչ այժմ ֆինանսավորման չափը ձևավորվել է ըստ իրականացվող հանրակրթական ծրագրերի՝ կախված սովորողների թվից, սակայն 2023 թվականի սեպտեմբերից հաշվարկվում է դասարանների թվով:

«Հայաստանի մանուկներ» հիմնադրամը 2022 թվականին դպրոցում իրականացրել է առողջապահական ծրագիր, որի շրջանակներում դպրոցին տրամադրել է 1.524.000 (մեկ միլիոն հինգ հարյուր քսանչորս հազար) դրամ դրամաշնորհ, որն օգտագործվել է դպրոցի բակում խաղահրապարակ և մարզահրապարակ ստեղծելու և «Առողջ ապրելակերպ» առարկան 1-ից 9-րդ դասարաններում դասավանդելու նպատակով: Պարապող ուսուցչի աշխատավարձը վճարել է «Հայաստանի մանուկներ» հիմնադրամը:

2022-2023 ուսումնական տարում «Հայաստանի մանուկներ» հիմնադարամը դպրոցին տրամադրել է 1.000.000 (մեկ միլիոն) դրամ դրամաշնորհ, որն օգտագործվել է դպրոցում «Հետաքրքրաշարժ մաթեմատիկա» խմբակը վարելու, էլեկտրոնային գրատախտակ և խմբակի պարապմունքների համար անհրաժեշտ այլ նյութեր ձեռք բերելու նպատակով:

Դպրոցի զարգացումը ենթադրում է հստակ և թափանցիկ ֆինանսական ծախսեր: Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեության հիմնական նպատակը, նաև սովորողների ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ միջավայրի ձևավորումն ու զարգացումն է սահմանափակ ֆինանսական ռեսուրսների պայմաններում: Ֆինանասական ծախսերը մասնավորապես բավականացնում է աշխատավարձերի, կոմունալ, գրենական , տնտեսական ծախսերի վճարմանը:

Աղյուսակ 16: ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի բյուջեն 01.06.2023-ի դրությամբ

	ՄՈՒՏՔԵՐ	ԵԼՔԵՐ	ՄՆԱՑՈՐԴ
ՄՈՒՏՔ	**34970262**	**13372000**	**21598262**
ՄՆԱՑՈՐԴ	**9488370**	**7903009**	**1585361**
ՏՐԱՆՍՊՈՐՏ. ԾԱԽՍ	**40000**	**40000**	**0**
ԸՆԴԱՄԵՆԸ	**44518232**	**21318709**	**23199523**

Աղյուսակ 17: Համաձայն ՀՀ Արագածոտնի մարզի «Արտենիի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի ներքին գնահատման 2022-2023թթ. Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ ընթացիկ և նախորդ 2 ուստարիների համար:

Ուսումնական հաստատության ներքին արդյունավետության հիմնական ցուցանիշները՝ **2022-2023** ուս. տարվա				
Ցուցանիշներ	2020-2021 ուս. տարի	2020-2021 ուս. տարի	2020-2021 ուս. տարի	Փոփոխությունների դինամիկան (աճ կամ նվազում)
Սովորող-ուսուցիչ հարաբերակցությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը ուսուցիչների ընդհանուր թվին)	3,7	3,7	3,5	Նվազում
Սովորող/ սպասարկող անձնակազմ հարաբերությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը սպասարկող անձնակազմի ընդհանուր թվին)	14,6	14,6	10,5	Նվազում

Դասարանների միջին խտությունը (հաշվարկ. հաստատության սովորողների ընդհանուր թվի հարաբերությունը կոմպլեկտավորված դասարանների ընդհանուր թվին)	12	11	10,5	Նվազում
Մեկ սովորողի հաշվով հաստատության տարեկան նախահաշիվը (հաշվարկ. հաստատության տարեկան բյուջեով հաստատված ամբողջ գումարի հարաբերությունը հաստատության սովորողների ընդհանուր թվին)	584158	560663	4421105	Նվազում
Սպասարկող անձնակազմի միջին աշխատավարձը	72292	72292	77801	աճ
Ուսուցչների միջին աշխատավարձը	84591	85830	88,5	աճ
Վարչական աշխատողների միջին աշախատավարձը	177760	203078	152308	Նվազում
Տվյալներ հաստատության արտաբյուջետային միջոցների վերաբերյալ				
Հաստատության տարեկան նախահաշվում արտաբյուջետային միջոցների չափը (հաշվարկ. հաստատության տարեկան բյուջեում արտաբյուջետային միջոցների չափի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	0,27%	0,5%	0,27%	
Ծնողների կողմից դրամական ներդրումների տարեկան չափը	0	0	0	

Հովանավորչական և դրամաշնորհային միջոցների տարեկան չափը (հաշվարկ. ծնողների կողմից տարվա կտրվածքով կատարած ներդրումների, դրամաշնորհների և հաստատության տարեկան բյուջեում)	0	300000	1525000	
Աշխատավարձերի վճարման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկ. աշխատավարձերի վճարման հոդվածով՝ ներառյալ հարկերը, հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)		48%	48%	
Կոմունալ վճարների գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկ. կոմունալ վճարների հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)		0.0001%	0.0001%	
Նոր գույքի, այդ թվում՝ սարքավորումների ձեռբերման գծով հաստատության տարեկան ծախսերի չափը (հաշվարկ. գույքի ձեռբերման հոդվածով հաստատության տարեկան ծախսերի գումարի և հաստատության տարեկան բյուջեի ընդհանուր գումարի հարաբերությունը՝ տոկոսային արտահայտությամբ)	1402800	0,7		

Դասարանների թվի փոփոխման պատճառով կարող է փոփոխվել դպրոցի ֆինանսավորման չափը: Հետևաբար դպրոցը աշխատավարձից, հարկերից ու կոմունալ վճարներից զատ՝ գրեթե այլ ծախսեր չի նախատեսում: Լրացված աղյուսակում նկատելի է ուսուցիչների միջին աշխատավարձի աճ, ինչը պայմանավորված է դասաժամերի ավելացմամբ, իսկ սպասարկող անձնակազմինը՝ նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

2.1 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Առկա է դպրոցի շենք՝ վերանորոգված միջանցքներով և տանիքով, վերջերս փոխված պատուհաններով, մուտքի նորացված դռներով, աստիճանահարթակով, պահեստով, ճաշարանով: • Առկա է ռազմագիտության կաբինետի առկայություն: • Հարմարեցված շենք ԿԱՊԿՈՒ սովորողներին. կա թեքահարթակ, սանհանգույցում ամրացված է բռնակ: • Գործում է ջրահեռացման համակարգ՝ կոյուղի: • Կա համակարգչային և «Արմաթ» լաբորատորիա, գրադարան-ընթերցասրահ, վարչական սենյակ, պահեստ, նկուղ՝ հակաճառագայթային թաքստոցով, 2 սանհանգույց, 3 վերանորոգված դասասենյակներ՝ անվանակոչված պատերազմում անմահացած սաների անուններով: • Առկա է ջեռուցման գազաֆիկացված համակարգ: • Ապահովված է շուրջօրյա հոսող ջրով:	• Դպրոցի շենքային պայմանները սահմանափակ են • Դպրոցի շենքը, մասնավորապես, դասասենյակները, դահլիճը և նկուղային հարկի հակաճառագայթային թաքստոցը (որը գյուղում միակն է) ունեն բարեկարգման և վերանորոգման կարիք: • Հանդիսությունների դահլիճը հարմարեցված է մարզադահլիճին: • Լաբորատորիան ու գրադարանը ունեն վերանորոգման կարիք: • Դպրոցն ուսուցչանոցի կարիք ունի: • Համակարգչային կաբինետը և «Արմաթ» լաբորատորիան հարմարեցված են մեկ սենյակում: • Բուժկետը բացակայում է: • Դպրոցի բակն ունի ֆուտբոլի փոքր դաշտի կարիք ունի: • Մարզահրապարակը ունի բարեկարգման կարիք : • Դպրոցի տարածքն անհրաժեշտ է զինել շուրջօրյա տեսահսկողական անվտանգության համակարգով տեսախցիկներով: • ԿԱՊԿ ունեցող աշակերտների համար ռեսուրս-սենյակ չկա:

2.2 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դասարանների գույքը 1-ին հարկում նոր է: • Դպրոցն ունի 3 գործող համակարգիչ, 3 տպիչ սարք, 1 էլեկտրոնային գրատախտակ, 3 լուսացրիչ և 1 նոթբուք: • Առկա է սառը և տաք հոսող ջուր: • Կա լվացարանի և հիգիենայի պարագաների: • Առկա է ատամակայան: • Գրադարանը հագեցված է: • Տարրական դպրոցի սովորողների համար կազմակերպվում է ամենօրյա տաք սնունդ: • Կահավորված են խոհանոցը, ճաշարանը և պահեստը: Առկա են սառնարաններ, սալօջախ, պահարաններ, սեղաններ, աթոռներ, լվացարաններ, ջեռոց և այլն:	• 2-րդ հարկում առկա պահարանները հին են և կարիք ունեն նորացման: • Լաբորատոր և սպորտային գույքի խիստ պակաս կա: • Գրադարանը կարիք ունի թվայնացված գրականությամբ համալրման: • Դպրոցը համակարգչային նոր տեխնիկայի կարիք ունի: • Հաշվի առնելով, որ դպրոցի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև դպրոցի պահպանման ծախսերին (էլեկտրաէներգիայի և բնական գազի սպառման դիմաց վճարներ, ընթացիկ վերանորոգում՝ սահմանափակ են դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությանը միջոցներ հատկացնելու հնարավորությունները:

2.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՑՈՒՆԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՒ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Խորհուրդն իրականացնում է իրեն վերապահված իրավունքներն ու պարտականությունները, եռամսյակը մեկ հրավիրում է ժողովներ, • Դպրոցի մանկավարժական խորհուրդը ներգրավված է հանրակրթության պետական չափորոշչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացմանը: • Դպրոցում գործում է առարկայական 3 մասնախմբեր, որոնք ամիսը մեկ անգամ գումարում են նիստեր և արդյունավետ կազմակերպում ուսումնադաստիարակչական աշխատանքները: • Դպրոցում գործում է աշակերտական խորհուրդ: • Ուսումնական հաստատությունն ու համայնքը համագործակցում են: • Ծնողական և աշակերտական խորհուրդները համագործակցում են միջոցառումների կազմակերպման ժամանակ: • Խորհուրդները սրտացավ են դպրոցի խնդիրներին,պատրաստակամ են աջակցել դպրոցին:	• Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ: • Ի հեռուկս գործող աշակերտական խորհրդի՝ սովորողների մասնակցությունը հաստատության խնդիրների լուծմանը բավարար է գնահատվում: • Խորհրդակցական մարմինների համագործակցային աշխատանքը թերի է: • Ծնողների հետ հանդիպումները հիմնականում տեղի են ունենում ծնողական ժողովների ժամանակ և ներկա են գտնվում միայն մայրերը: • Առարկայական մասնախմբերը չեն համագործակցում հարևան դպրոցների մ/մ-ների հետ: • Ոչ բոլոր ծնողներն են լավ կատարում իրենց պարտականությունները:

2.4 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԻՄ-Ի, ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ, ՇԱՀԱՌՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ ԿԳՄՍՆ-ի, Արագածոտնի մարզպետարան, ՀՀ ՆԳՆ ոստիկանության, փրկարար ծառայության, ՀՀ ՊՆ-ի, ԿԶՆԱԿ հիմնադրամի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, Արագածոտնի մարզի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, այլ դպրոցների, հասարակական կազմակերպությունների, Թալինի համայնքապետարանի և Արտենի բնակավայրի վարչական ղեկավարի հետ: • Դպրոցը համագործակցել է «Խաղաղության կորպուս» կազմակերպության հետ և ունեցել է 4 կամավոր: «Հայաստանի մանուկներ» հիմնադրամի աջակցությամբ դպրոցում գործել են «Մասնագիտական կողմնորոշում», «Ազգագրություն», թատերական, ինժեներաճարտարագիտական, «Առողջ ապրելակերպ» խմբակները, 2023-ից գործում է «Հայաստանի մանուկներ» հիմադարամի «Հետաքրքրաշարժ մաթեմատիկա» խմբակը: «Վորլդ Վիժն» կազմակերպությունը դպրոցում ունեցել է «Խաղաղության ճանապարհ» խմբակը: «Վորլդ Վիժն»-ը ապահովվել է դպրոցում գործող «Արմաթ» լաբորատորիայի ներքին հարդարանքը:	• Համայնքի հետ համագործակցությունը բավարար չէ: • Համայնքում կրթական և մարզամշակութային նախաձեռնությունները սահմանափակ են: • Ծնողական համայնքը չունի բավարար սեփական նախաձեռնողականություն, աշխատանքները կազմակերպվում են ուսումնամանկավարժական անձնակազմի կողմից: • Բացակայում են կրթական փոխանակման ծրագրերը:

2.5 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի ուսումնական միջավայրը 2 հարկերում էլ հարմարավետ է: Ապահովված է լոկալ ջեռուցմամբ: • Դպրոցի 1-ին հարկի միջանցքների պատերը հագեցած են նկարներով, ուսումնական պաստառներով: 2-րդ հարկ տանող աստիճանների երկայնքով փակցված են գեղեցիկ նկարներ: • Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը, հսկվում է տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը: • Տարրական դասարանների աշակերտների անվճար սննդի կազմակերպման համար ստեղծվել են բավարար պայմաններ (խոհանոց և ճաշարան), և այն կազմակերպվում է սանիտարահիգենիկ պայմաններին հետևելով: • Դպրոցում համերաշխ մթնոլորտ է. սովորողների և ուսուցիչների, ուսուցիչների և ուսուցիչների, ծնողների և ուսուցիչների միջև չկան լարված և անառողջ հարաբերություններ:	• Դպրոցը չունի մարզադահլիճ ու հանդերձարան: • Լաբորատորիաների լիարժեք հագեցվածություն չկա: • Դպրոցի բակում գտնվող խաղահրապարակի բարեկարգման անհրաժեշտություն կա: • Առարկայական դասասենյակների բացակայություն: • Համակարգչային սենյակում ավելացնել համակարգիչների թիվը :

2.6 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցի բոլոր ուսուցիչները՝ բացառությամբ երեքի, ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և անցել են պարտադիր ատեստավորում: • Դպրոցի մանկավարժական համակազմը հետևողականորեն մասնակցում է մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված դասընթացների, սեմինարների: • Ուսուցիչները բաց դասերի ընթացքում կարողանում են կիրառել ՏՀՏ գործիքներ: • Դպրոցում կան դասավանդման աշակերտակենտրոն, մասնակցային, ինտերակտիվ մեթոդներին տիրապետող և դրանք կիրառող ուսուցիչներ:	• Բարձրագույն կրթություն չունեցող 3 ուսուցիչներին առաջարկվել է մասնակցել կամավոր ատեստավորմանը: • Ուսումնական տարվա ընթացքում հաստատությունից դուրս անցկացվող գործնական պարապմունքներ չեն իրականացվել: • Մանկավարժական համակազմում մարզի լավագույն ճանաչված ընդամենը մեկ ուսուցիչ կա (2005 թվական, աշխարհագրություն առարկայի դասավանդող): • Կա որոշ մանկավարժների հետաքրքրության պակաս նորամուծությունների նկատմամբ: • Սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդներն անարդյունավետ չեն կիրառվում • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման մակարդակը ցածր է:

2.7. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԸ ՁԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցում երաշխավորված է երեխաների՝ կրթություն ստանալու հիմնարար իրավունքը: • Ուսուցիչներն աշխատում են պարտաճանաչ, հետևողական են աշակերտների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքներում, սերտորեն համագործակցում են ծնողների հետ: • Ուսման որակը բարելավելու, սովորողների հմտությունները, կարողություններն ու դիրքորոշումները զարգացնելու, առողջությունն ու անվտանգությունը պահպանելու ուղղությամբ աշխատանքներ են տարվում: • Կազմակերպվում են դասարանական, արտադասարանական ու արտադպրոցական նպատակային միջոցառումներ, որոնց շնորհիվ սովորողները մշակութապես զարգանում են ու ընդլայնում են իրենց մտահորիզոնը:	• Սովորողների ուսումնառության բավարար առաջադիմություն և որակ, ուսման նկատմամբ հետաքրքրության պակաս. սովորողների գնահատականները տարեկան և ավարտական դասարաններում լավ են: • Գերազանց առաջադիմությամբ աշակերտերի ցածր ցուցանիշ: • Առարկայական օլիմպիադաների մարզային և հանրապետական փուլերում մասնակցության բացակայություն: • Սոցիալական կայքերից անարդյունավետ կախվածություն: • Հատուկ ուշադրության չի արժանացվում հալածանքի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության դրսևորումների բացառմանը:

2.8. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՏՀՏ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ԱՅԼ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ, ԿԻՐԱՌՎՈՂ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցն ունի «Արմաթ» լաբորատորիա: Թեև այն տեղակայված է համակարգչային կաբինետում՝ սովորողների կրթությունը էապես շահում է ինժեներական այդ լաբորատորիայի առկայությունից: • Անհրաժեշտության դեպքում համակարգիչը կիրառվում է դասապրոցեսը ինտերակտիվ դարձնելու նպատակով: • 2022-2023 ուսումնական տարվա վերջում դպրոցը համալրվել է 1 էլեկտրոնային ինտերակտիվ գրատախտակով, որը տեղադրված է դպրոցի լաբորատորիայում: • Առկա է բնագիտական առարկաների լաբորատորիա:	• Դպրոցը լաբորատոր փորձերի իրականացման համար նախատեսված սարքավորումներ լիարժեք չունի: • Դպրոցն ունի համակարգչային կաբինետ՝ 1 համակարգչով՝ տեղակայված «Արմաթ» լաբորատորիայում: Համակարգիչների ձերքբերման անհրաժեշտություն կա: • Բնագիտական առարկաների լաբորատորիան հագեցած չէ համապատասխան ուսումանական նյութերով:

2.9 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿԱՐԾԻՔ, ՆԵՐԱՌԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԱՐԺԵՔԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ուսումնական հաստատությունում ապահովված է սեռերի և ազգային փոքրամասնությունների երեխաների միջև հավասարությունը: • Սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները: Դպրոցում հաշվի են առնվում թե ծնողական, թե աշակերտական և թե ուսուցչամանկավարժական համակազմի ազատ կամաարտահայտության իրավունքները: • Ապահովված են անձնակազմի առօրյա բնականոն գործունեության համար անհրաժեշտ անվտանգային, առողջապահական, սանիտարահիգիենիկ պայմանները: • Վարչական աշխատակազմն աշխատում է ժողովրդավարական աշխատաոճով: Ժամանակին ուսուցիչներին ներկայացվում է օրենսդրական փոփոխությունները, ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Արագածոտնի մարզպետարանի որոշումներն ու կարգադրությունները: • Ծնողները վստահում են մանկավարժական կոլեկտիվին, համագործակցում նրա հետ, իրենց հուզող հարցերի վերաբերյալ առաջարկներ են անում: • Մանկավարժական կոլեկտիվը ծնողներին մշտապես տեղյակ է պահում նրանց երեխաների ուսումնական և դաստիարակչական խնդիրներին, դպրոցի կարգապահական կանոններին: • Համայնքն աջակցում է հաստատությանը:	• Սովորողների մասնակցությունը հաստատության խնդիրների լուծմանը կարելի է գնահատել բավարար: • Անհրաժեշտ է ակտիվացնել աշակերտական գործունեության դերակատարությունը: • Սովորողները լիովին չեն տիրապետում իրենց պարտականություններին: • Աշակերտների ոչ լիարժեք մասնակցություն համայնքում կազմակերպվող միջոցառումներին:

2.10 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՐԺԵՎՈՐՄԱՆ, ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՒ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Ուսուցիչների՝ տարբեր մրցույթների, վերապատրաստումներին և կամավոր ատեստացիայի մասնակցության համար դպրոցը հանդիսանում է խթանիչ ուժ:	• Ուսուցիչներից շատերը պատրաստ չեն կամավոր ատեստավորվել՝ ելնելով քննական թեստերում տեղ գտած ծրագրային բարդությունից: • Դպրոցի շենքային պայմանները (ուսուցչանոցի բացակայություն) չեն ապահովում անձնակազմի ինքնակրթության համար անհրաժեշտ պայմաններ: • համապատասխան ռեսուրսների առկայության դեպքում փորձի փոխանակման և վերապատրաստման միջոցառումների իրականացում ոլորտի լավագույն մասնագետների հետ • Ուսուցչամանկավարժական անձնակազմի ոչ բոլոր անդամների մոտ է առկա ինքնակատարելագործման և ինքնակրթության մոտիվացիա:

2.11 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
• ուսուցչանոցի ստեղծում, • բուժկետի ստեղծում, • դպրոցի դասասենյակների բարեկարգում, • բակում ֆուտբոլի փոքր դաշտի ստեղծում, • խաղահրապարակի տարածքի բարեկարգում, • դպրոցում գտնվող ապաստարանի բարեկարգում, անհրաժեշտ միջոցներով համալրում, • ԿԱՊԿ ունեցող աշակերտների ռեսուրս-սենյակի ստեղծում, • Դպրոցի տարածքի շուրջօրյա տեսահսկողական անվտանգության համակարգով տեսախցիկներով զինում,

ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱ
• 2-րդ հարկի դասասենյակների համար նոր պահարանների ձեռքբերում, • ուսուցչանոցի ու բուժկետի համար նախատեսված գույքի ձեռքբերում, • թվայնացված գրականության հասանելիությունն ապահովվելու ու աշակերտներին տրամադրելու նպատակով անհրաժեշտ էլեկտրոնային գրադարանի ստեղծում, • համակարգչային նոր տեխնիկայի ձեռքբերման անհրաժեշտություն

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

- կիրառել խրախուսանքի հավասար և արդար գնահատման գործիքակազմ (չափորոշիչ՝ հիմնված ուսուցիչների կողմից դասապրոցեսի ընթացքում իրականացվող աշխատանքների վրա, մասնավորապես, նորարարության, նյութի մատուցման եղանակների, դասընթացի արդյունավետ պլանավորման, ժամանակի արդյունավետ կառավարման, ինքնակրթվելու և շարունակական կատարելագործման ցանկության և դրանց կատարման համար,
- ակտիվացնել տարրական և միջին դպրոցներում դասավանդող ուսուցիչների կապը,
- տարածել առաջավոր մանկավարժական փորձը (մասնախմբերի նիստերում, գործնական պարապմունքների, դասալսումների վերլուծության մանկավարժական գիտաժողովների, կոնֆերանսների և նմանատիպ այլ միջոցառումների ժամանակ),
- մասնախմբերի նախաձեռնությամբ կազմակերպել հանդիպում-քննարկումներ կամավոր ատեստավորմանը նախապատրաստվելու, առաջարկված թեմաները ուսումնասիրելու և առարկայական գիտելիքները հարստացնելու ուղղությամբ,
- ուսուցչական անձնակազմը դարձնել թիմ, ձևավորել համագործակցելու, միմյանց աջակցելու, փոխադարձ դասալսումներ իրականացնելու, հետադարձ կապ տրամադրելու մշակույթ,
- մասնագիտական մրցույթների (այդ թվում՝ տարակարգեր ձեռք բերելու) մասնակցության պատրաստակամության խթանում,

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

- տրամադրել մասնագիտական կողմնորոշման աջակցություն սովորողների առաջադիմությունը խթանելու նպատակով,
- խթանել սովորողների մոտ ինքնավարության, ինքնակրթության և ինքազարգացման միտումներ,
- սովորողների համար կազմակերպել սպորտլանդիաներ, ինտելեկտուալ մրցույթներ, մշակութային միջոցառումներ
- միջին դասարանների աշակերտների համար սննդի կազմակերպում և օրենքով սահմանված կարգով թույլատրելի սննդի ձեռքբերում
- ստեղծել մշակութային խմբակներ, որոնց մեջ կներառվի նկարչությունը, կավագործությունը, ազգային երգ ու պար,
- տարրականից միջին դպրոց անցնելիս՝ բարձր դասարանների աշակերտների ներգրավել, ամառային արձակուրդների ժամանակ հանդիպումներ կազմակերպելու ու տարրական դասարանի աշակերտների հետ ամառային արձակուրդների հանձնարարություններ կատարելու նպատակով:

ԾՆՈՂԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄ

- էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք-դպրոց փոխադարձ կապը՝ մեծացնելով փոխադարձ վստահության մակարդակը,
- ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները, խրախուսել երեխաների և ծնողների համատեղ ստեղծագործական գործունեությունը,
- ամրապնդել ծնողական խորհրդի կապը աշակերտական, մանկավարժական և կառավարման խորհուրդների հետ,
- կազմակերպել համատեղ դասավանդում ծնողների հետ աշակերտ- ծնող, ուսուցիչ-ծնող կամ երկու ծնող ձևաչափերով,
- ներգրավել ծնողներին դպրոցի, ինչպես նաև դպրոցի հարակից տարածքների բարեկարգման, նորոգման, արդիականացման աշխատանքերում,
- կազմակերպել սպորտային, ինչպես նաև առարկայական մրցաշարեր, ձևավորել ընտանեկան թիմեր, մասնակից դարձնել տարբեր առաջնությունների:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

- սովորողների առօրյա ուսումնառության և ինքնակրթության մոտիվացիան խթանող միջավայրի ապահովում՝ ուղղված ոչ միայն ակադեմիական գիտելիքների ձեռքբերմանը, այլ նաև բազմակողմանի զարգացած երիտասարդ սերնդի կերտմանը:
- Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի (ֆիզիկական միջավայր , նյութատեխնիկական բազա) ապահովում:

ՀԱՄԱՑՆՔԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՒ ՇԱՀԱՌՈՒ ԿՈՂՄԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- դպրոց-հասարակություն գործընկերության ձևավորում,
- շահառու խմբերի հետ ծրագրերի շարունակականության ապահովում,
- հին ծրագրերը կյանքի կոչելու անհրաժեշտություն:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿ

- օլիմպիադների և այլ ծրագրերի մասնակցության հնարավորության,
- սովորողների կրթության առաջադիմության ու որակի ապահովում:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ ԵՒ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

- ժամանակակից զարգացող տեխնոլոգիաների, ՏՀՏ գործիքներին տիրապետելու հնարավորության ստեղծում,
- տարատեսակ աշխատաժողովների և փորձի փոխանակման հնարավորությունների ստեղծում:

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՂ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐ

- Իրավական ակտերի կազմման գործընթացում դպրոցի անձնակազմի ներգրավվածության ընդլայնում,
- դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածություն ծնողական համակազմի շրջանում,
- կազմակերպության կանոնադրություն, ներքին կարգապահական կանոններ:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ, ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Դպրոցի զարգացման 2023-2028 թվականների ծրագիրը սահմանում է հետևյալ նպատակները և նպատակներից բխող հետևյալ խնդիրներն ու ակնկալվող արդյունքերը

ՆՊԱՏԱԿՆԵՐ

- Ուսումնառության գերազանցության խթանում.
  Աշակերտները կզարգացնեն ամուր հիմնարար գիտելիքներ, քննադատական մտածողություն և հմտություններ՝ համաձայն հանրակրթական զարգացման ռազմավարությունների և տեսլականի:
- Աշակերտակենտրոն միջավայր.
  Յուրաքանչյուր աշակերտի համակողմանի և ներդաշնակ զարգացմանը նպաստող պայմանների ստեղծում և յուրաքանչյուր աշակերտի իր ներուժը դրսևորելու հնարավորության ընձեռում:
- Ուսուցչամանկավարժական համակազմի կատարելագործում.
  Ուսուցիչները պատրաստ կլինեն մշտապես կատարալագործել իրենց մասնագիտական որակները և ընդառաջ գնալ մարտահրավերներին:
- Հիմնական դպրոցն ավարտող աշակերտի արժեհամակարգ ձևավորող կրթության ապահովում.
  Գիտելիքներ, հմտություններ, կարողություններ և դիրքորոշում ունեցող անհատ, որն ունակ է որոշում կայացնել համաձայն ժամանակակից աշխարհի հարափոփոխ պահանջների:
-

ԽՆԴԻՐՆԵՐ

- դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի հարստացում և արդիականացում,
- կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում,
- համագործակցության սերտացում դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ,
- ուսուցչամանկավարժական անձնակազմի մասնագիտական որակի և կարողությունների զարգացում,
- դպրոց-ընտանիք-համայնք կապի ամրապնդում, որը կնպաստի դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և նրա ընտանիքի վերաբերմունքի և պատասխանատվության բարձրացմանը,
- ուսումնական միջավայրի բարելավում,
- նորարարական ու ստեղծարար տեխնոլոգիաների կիրառում,
- դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի ուղղությամբ աշխատանքների իրականացում,

ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ

- հրապուրիչ կրթական միջավայրի ստեղծում և ժամանակակից որակյալ կրթության ապահովում
- ուսուցչամանկավարժական համակազմի կատարելագործում և նրանց նախաձեռնողական որակների բարձրացում
- սովորողներ, որոնք կշարունակեն ինքնազարգանալ կատարելագործելով իրենց կարողունակությունները
- ծնողական և աշակերտական խորհուրդների դերի բարձրացում, մրցունակ հասարակություն ձևավորելու կարողություններ
- հոգաբարձուների խորհրդի ձևավորում
- համայնքային և մարզամշակութային հնարավորությունների ստեղծում
- ՏՀՏ և արդի նյութատեխնիկական բազայի համալրում
- դպրոցի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր աշակերտի և նրա ընտանիքի վերաբերմունքի ու պատասխանատվության զգացման բարձրացում
- առաջադեմ կրթական փորձի ձեռքբերում և տեղայնացում
- դպրոցի՝ համագործակցային մոտեցմամբ, մասնակցային մշակույթով, կրթական լավագույն փորձի տարածման հանձնառություն

4. ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

N	Գործողություններ և միջոցառումներ	Ժամանակ ցույց	Պատասխանատուներ	Հնարավոր ռիսկեր և դրանք չեզոքացնող գործողություններ	Անհրաժեշտ միջոցներ	Վերահսկողության մեխանիզմներ
Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում **Նպատակ.** Շենքային պայմանների բարելավում նյութատեխնիկական բազայի համալրում **Խնդիր 1.** Ստեղծել ուսուցչանոց, բարեկարգել հանդիսությունների դահլիճն ու ստեղծել մարզադահլիճ **Խնդիր 2.** Համալրել դպրոցի նյութատեխնիկական բազան						
1	Ստեղծել ուսուցչանոց: 27 ուսուցչի համար 1 մեծ սեղան, 3 պահարան և 27 աթոռ, 1 սպիտակ գրատախտակ:	2024-25թթ	Տնօրեն/համակարգող, հաշվապահ, տնտեսվար, լիազոր մարմին	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել հաշվետվություն: ներկայացնել գնահատման
2	Ստեղծել բուժկետ: 1 սեղան, 2 աթոռ, զննման համար նախատեսված 1 մահճակալ:	2024թ.	Տնօրեն/համակարգող, հաշվապահ, տնտեսվար լիազոր մարմին	Ռիսկ՝ համապատասխան տարածք գտնելու անհնարինություն, Ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Չեզոքացնող միջոց՝ դասասենյակների նպատակային օգտագործում, ֆինան սավորման պլանավորում և արդյունա վետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել հաշվետվություն: ներկայացնել գնահատման
3	Ստեղծել ԿԱՊԿ ունեցող աշակերտ ների ռեսուրս-սենյակ	2024 թ.	Տնօրեն/ համակարգող, տնտեսվար	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել հաշվետվություն: ներկայացնել գնահատման

4	Բարեկարգել դպրոցի հանդիսու թյունների դալիճն ու դասասենյակ ները:	2027թ	Տնօրեն/ համակարգող, տնտեսվար, լիազոր մարմին	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Զեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել հաշվետվություն: ներկայացնել գնահատման
5	Բարեկարգել դպրոցի ապաստարա նը և զինել անհրաժեշտ միջոց-ներով:	2027թ	Տնօրեն/համակարգող, տնտեսվար, լիազոր մարմին խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ ապաստարանի հիմնանորոգում իրականացնելու անհնարինություն, Ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Զեզոքացնող միջոց՝ ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել հաշվետվություն: ներկայացնել գնահատման
6	Ձեռք բերել գույք և պահարաններ 2-րդ հարկի դասասենյակների համար:	2024-25թ թ	Տնօրեն/ համակարգող, տնտեսվար	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Զեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել ամենամյա հաշվետվություն ներկայացնել գնահատման
7	Ստեղծել թվայնացված, էլեկտրո-նային գրականության և այն տրամադրել աշակերտներին:	2024-25թ թ	Տնօրեն/համակարգող, հաշվապահ, գրադարանավար, լիազոր մարմին, այլ կազմակերպություններ	Ռիսկ՝ Հետքրքրության պակաս Զեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ էլ գրադարան ունենալու կարվորության վերաբերյալ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
8	Ձեռք բերել համակարգչային նոր տեխնիկա:	2024-25թ թ	Տնօրեն/համակարգող, հաշվապահ,	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Զեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	կազմել ամենամյա հաշվետվություն ներկայացնել գնահատման

9	Բարեկարգել խաղահրապարակի տարածքը: Ստեղծել բակում ֆուտբոլի փոքր դաշտ:	2025թ	Տնօրեն/համակարգող, տնտեսվար, Խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրու թյամբ չարգելված այլ միջոցներ	կազմել ամենամյա հաշվետվություն ներկայացնել գնահատման
10	Դպրոցի տարածքը զինել շուրջօրյա տեսահսկողական անվտանգության համակարգով՝ տեսախցիկներով:	2024թ	Տնօրեն/համակարգող, հաշվապահ,	Ռիսկ՝ ֆինանսական ոչ բավարար միջոցներ: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի ֆինանսավորման պլանավորում և արդյունավետ կառավարում:	դպրոցի բյուջե և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	կազմել ամենամյա հաշվետվություն ներկայացնել գնահատման

Ոլորտ 2. Կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում
Նպատակ. Սովորողների առաջադիմության և որակի բարձրացում ապահովող գործողությունների պլանավորում:
Խնդիր 1. Ուսուցման և զարգացման ապահովումը կրթական ծրագրերի շրջանակում (կարողունակությունների զարգացում):
Խնդիր 2.Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան :
Խնդիր 3. Նորարարական ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում:

1	Կազմակերպել լրացուցիչ պարապմունքներ ՀՊՁ պահանջների նվազագույն շեմը չհաղթահարող սովորողների հետ	2023-28թթ շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ, ծնողական խորհուրդ	Ռիսկ՝ աշխատանքներում ներգրավվածության մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորման ներկայացում	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
2	Կազմակերպել երկարօրյա ուսուցում:	2023թ. շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ուսուցիչներ, ծնողական խորհուրդ, լիազոր մարմին	Ռիսկ՝ ուսուցիչների հետաքրքրության պակաս: Չեզոքացնող միջոց՝ կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորման ներկայացում:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

3	Ծուցաբերել աջակցություն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, ԴԱԿ, համակարգող, դասղեկներ, ծնողներ, համայնք, այլ կազմակերպություններ	Ռիսկ՝ աջակցության կարևորության հիմնավորման ներկայացում: Զեզոքացնող միջոց՝ կատարվող աշխատանքների կարևորության հիմնավորման ներկայացում	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
4	Ստուգել սովորողների գիտելիքները հայտորոշիչ թեստերի միջոցով:	Յուրաքանչյուր ուս. տարվա կիսամյակ իսկիզբ	Տնօրեն, ԴԱԿ, համակարգող, դասղեկներ, ծնողներ,համայնք, այլ կազմակերպություններ	Ռիսկ՝ ուսուցիչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում: Զեզոքացնող միջոց՝ վերահսկողական աշխատանքների իրականացում՝ դրանց պատշաճ կատարման ուղղությամբ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
5	Ներդնել առարկայական էլեկտրոնային դասեր էլեկտրոնային կրթական նյութերով՝ օգտվելով ԿՏԱԿ-ի պաշարների շտեմարան էջից:	Յուրաքանչյուր ուս. տարում	Տնօրենի ուս. գծով տեղակալ, ՄԿԱՏ մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ ուսուցիչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում: Զեզոքացնող միջոց՝ վերահսկողական աշխատանքների իրականացում՝ դրանց պատշաճ կատարման ուղղությամբ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
6	Մշտադիտարկել ուսուցման գործընթացի վերջնարդյունքները	Յուրաքանչյուր տարվա կիսամյակների վերջ	Տնօրենի ուս. գծով տեղակալ, ՄԿԱՏ մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ ուսուցիչների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում: Զեզոքացնող միջոց՝ վերահսկողական աշխատանքների իրականացում՝ դրանց պատշաճ կատարման ուղղությամբ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

7	Մշտադիտարկել և վերլուծել դպրոցի դաստիարակչական միջավայրը. բացահայտելով առկա խնդիրներն ու բացթողումները՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ:	2023-28 թթ շարունակական	Տնօրենի ուս գծով տեղակալ, ՄԿԱՏ, ԴԱԿ, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ Մասնակցություն ապահովվելու ներգրավ վածության մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ կատարվող աշխատանքների կարևորությունը հիմնավորող փաստարկների ներկայացում:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
8	Կազմակերպել սեմինարներ, մասնագիտական կատարելագործմանն ուղղված դասընթացներ:	2023-28 թթ շարունակական	Տնօրենի տեղակալ, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ Մասնակցություն ապահովվելու ներգրավ վածության մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ կատարվող աշխատանքների կարևորությունը հիմնավորող փաստարկների ներկայացում:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
9	Համագործակցել հանրապետության այլ ուսումնական հաստատությունների հետ՝ հեռավար և առկա ձևաչափով :	2024-28 թթ շարունակական	Տնօրեն, ԴԱԿ համակարգող դասղեկներ, լիազոր մարմին, խորհրդակցական մարմին	Ռիսկ՝ նախատեսվող աշխատանքների՝ ուսուցիների կողմից ոչ բավարար մակարդակով իրականացում: Չեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկում համագործակցության կարևորության մասին:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

Ոլորտ 3. Համագործակցություն դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ

Նպատակ. Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում

Խնդիր 1. Կառավարման խորհրդի դերի բարձրացում դպրոցի հետ համագործակցության արդյունքում

Խնդիր 2. Ծնողխորհրդի հետ համագործակցության բարելավում

Խնդիր 3. Աշխորհրդի գործունեության ակտիվացում

Խնդիր 4. Հոգաբարձուների խորհուրդների ձևավորում

Խնդիր 5. Մանկավարժական խորհրդի լիազորությունների գործնական կիրառում

1	Ընդլայնել դպրոցի խորհրդի լիազորությունները և իրավունքները: Խրախուսել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, մրցույթներին, ներքին գնահատման աշխատանքներին, նյութատեխնիկական բազայի հարստացման ուղղությամբ որոշումների ընդունմանը: Ներկայացնել Կրթության պետական կառավարման լիազոր մարմնին դպրոցի զարգացման վերաբերյալ առաջարկություններ: Բյուջեի ճիշտ պլանավորում, որը կնպաստի դպրոցի ֆինանսական միջոցների առավել նպատակային օգտագործմանը :	2023-28թթ շարունակական	Տնօրեն, ԴԱԿ, համակարգող, դասղեկներ, խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ խորհրդակցական մարմինների անդամների՝ դպրոցի զարգացմանը ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ փոխգործակցության կարևորությունը ներկայացնելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
2	Ընդգրկել ծնողական խորհրդին ուսման կարևորագույն գործառույթներում: Ձևավորել ծնողական և մանկավարժական կոլեկտիվի կողմից միասնական պահանջներ՝ երեխաների դաստիարակության հարցում: Ներգրավել ծնողներին իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում: Աջակցել ծնողական խորհրդի աշխատանքների կազմակերպմանը՝ հատկապես սովորողների սոցիալ-կենցաղային աշխատանքներում:	2023-28թթ շարունակական	ՄԿԱՏ, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ ծնողական խորհրդի անդամների մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց հանդիպում-քննարկումներ ծնողների դերի կարևորությունն ընդգծելու նպատակով՝	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն

3	Ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը՝ ինքնավարության և ինքնակառա - վարման նպատակով :	2023-28թթ շարունակական	ՄԿԱՏ, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ աշակերտական խորհրդի անդամների մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց հանդիպում-քննարկումներ ինքնավար լինելու կարևորությունն ընդգծելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
4	Ստեղծել հոգաբարձուների խորհուրդ և կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչ ների: Ներգրավել նրանց դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիական բազայի ամրապնդմանը, արտա բյուջետային ֆոնդի ձևավորմանը:	2024-25թթ	Տնօրեն, ԴԱԿ, համակարգող, համայնք, այլ անհատներ	Ռիսկ՝ դպրոցի զարգացման գործում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ հանդիպումներ՝ դրա կարևորությունը ներկայացնելու հարցերի շուրջ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
5	Ստեղծել կառավարման խորհրդի և խորհրդակցական մարմինների միջև համագործակցային և փոխգործուն հարաբերություն:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, համակարգող, դասղեկներ, ծնողական խորհուրդ, համայնք/ վարչական տարածք	Ռիսկ՝ խորհրդակցական մարմինների անդամների՝ դպրոցի զարգացմանը ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց հանդիպում-քննարկումներ փոխգործակցության կարևորությունը ներկայացնելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
6	Աջակցել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, համակարգող, դասղեկներ, ծնողական խորհուրդ, համայնք/ վարչական տարածք	Ռիսկ՝ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին աջակցություն տրամադրելու ցանկության բացակայություն: Չեզոքացնող միջոց՝ քննարկումներ՝ հավասարության պահպանման տեսանկյունից դրա կարևորության շուրջ:	ծնողական համայնքի ներդրումներ	ամենամյա հաշվետվություն

7	Կիրառել մանկավարժական խորհրդի աշխատանքերում մասնակցային քննարկումների և որոշումների ընդունման սկզբունքներ: Ուշադրության կենտրոնում պահել մանկավարժական խորհրդի ընդունած որոշումների սահմանված ժամկետում կատարումը: Կիրառել ուսուցիչների աշխատանքների գնահատման և խրախուսման նոր գործիքներ:	2023-28թթ շարունակական	Տնօրեն ՄԿԱՏ, ԴԱԿ, ուսուցիչներ	Ռիսկ՝ մանկավարժական խորհրդի անդամների մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց հանդիպում-քննարկումներ մանկավարժների դերի կարևորությունն ընդգծելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

Ոլորտ 4. Ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում
Նպատակ. Ուսուցչամանկավարժական համակազմի որակական բարելավում
Խնդիր 1. Ուսուցիչների ինքնազարգացման ուղղված աշխատանքների կազմակերպում
Խնդիր 3.Անձնակազմի խրախուսման և պարգևատրման բազմաչափ համակարգի ներդրում
Խնդիր 2. Ապահովել ուսուցիչների համակարգաչային գրագիտությունը և դասապրոցեսում ՏՀՏ-ների կիրառման կարողությունը

1	Շարունակել համագործակցելու, միմյանց աջակցելու, փոխադարձ դասալսումներ իրականացնելու, հետադարձ կապ տրամադրելու ավանդույթը:	2023-28թթ շարունակական	Տնօրենի տեղակալ, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ	Ռիսկ՝ աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների իրականացման կարևորության գիտակցման բարձրացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
2	Կազմակերպել ուսուցչամանկավարժական անձնակազմի շարունակական վերապատրաստումներ, սեմինարներ և քննարկումներ:	2023-28թթ շարունակա կան	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի ղեկավարներ, այլ կազմակերպություններ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն: Չեզոքացնող միջոց՝ շահագրգիռ կողմերին դրանց կարևորությունը ներկայացնելու աշխատանքներ:	դպրոցի բյուջե	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

3	Ներդնել անձնակազմի խրախուսման և պարգևատրման բազմաչափ համակարգ՝ ըստ կատարած աշխատանքի (պաշտոնական աճ, պարգևատրումներ, մասնագիտական և կազմակերպական խրախուսում, այդ թվում «Դպրոցի լավագույն ուսուցիչ», «Դպրոցի լավագույն դասվար» և այլն:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ, ծնողական համակազմ:	Ռիսկ՝ աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ գնահատման չափանիշների հիման վրա խրախուսման արդյունավետության ներկայացում:	դպրոցի բյուջե	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
4	Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ կիրառումը դասերում: Իրականացնել դասերի դիտարկումներ: Պլանավորել ՏՀՏ գիտելիքների ուսուցում՝ ըստ կարողությունների և հմտությունների: Կազմել համապատասխան խմբեր ու աշխատանքային ժամանակացույց:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբի ղեկավարներ, ուսուցիչներ,	Ռիսկ՝ աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի զարգացման գործում դրանց կարևորության շեշտադրում:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
5	Ներդնել աշխատանքի նոր ձևեր և մեթոդներ, ինչպիսիք են զանգվածային լրատվության միջոցները և ժամանակակից տեխնոլոգիաները (ֆիլմեր, սկավառակներ, ինտերնետային կայքեր և այլն) :	2023թ շարունակա կան	Տնօրեն, տնօրենի ուսգծով տեղակալ, ՄԿԱՏ, մասնախմբերի ղեկավարներ	Ռիսկ՝ աշխատանքներում ներգրավվելու մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի զարգացման գործում դրանց կարևորության շեշտադրում:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

Ոլորտ 5. Համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ
Նպատակ. Համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ արդյունավետ համագործակցություն
Խնդիր 1. Համագործակցել տարածքային կառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ
Խնդիր 2. Համագործակցել կրթական հաստատությունների, հանրակրթական դպրոցների հետ
Խնդիր 3.Ձևավորել քաղաքացիական հասարակության քաղաքացի

1	Հրավիրել համայնքային ներկայացուցիչներին, այդ թվում հասարակական կազմակերպությունների ղեկավարներին դպրոցի միջոցառումներին: Կազմակերպել և անցկացնել հանդիպում - ցերեկույթներ համայնքի, մարզի, քաղաքի նշանավոր մարդկանց՝ ավեստագետների , արհեստագործ - վարպետների, մշակույթի գործիչների, գործարարների հետ:	2023-28թթ շարունակա կան	Տնօրեն, ՄԿԱՏ, ԴԱԿ համակարգող, դասղեկներ, խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում
2	Դաստիարակել քաղաքացիական հասարկության արժեքները կրող քաղաքացի՝ օժտված կամավորության, առաջնորդության,մասնակցայնության արժեքներով	2023-28թթ շարունակա կան	Տնօրեն, ՄԿԱՏ, ԴԱԿ համակարգող, դասղեկներ, խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում
3	Կազմակերպել աշխատաժողովներ՝ ՀԿ-ների և այլ ոլորտի ներկայացուցիչների ներգրավմամբ	2023-28թթ շարունակ ական	Տնօրեն, ԴԱԿ համակարգող, դասղեկներ, հոգեբան, սոց. մանկավարժ, խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում

4	Կազմակերպել մեդիագրագիտության սեմինարներ՝ ոլորտի ներկայացուցիչների հետ:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, ԴԱԿ համակարգող, դասղեկներ, օպերատոր, ծնողական և աշակերտական խորհուրդներ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում
5	Իրականացնել շաբաթօրյակներ, ծառատունկ և այլն՝ համայնքի հետ համատեղ	2023-28թթ շարունակական	Տնօրեն, ԴԱԿ համակարգող, դասղեկներ, սոց մանկավարժ, աշակերտական համակազմ	Ռիսկ՝ Կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Չեզոքացնող միջոց՝ նման միջոցառումների կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ:	Դպրոցի նյութա տեխնիկական բազա	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում
6	Կիրառել ներդրված դպրոցական բաժանորդագրության համակարգը մշակութային հաստատություններ այցելելու համար:	2023-28թթ շարունակական	ԴԱԿ, համակարգող, դասղեկներ , ծնողական խորհուրդ	Ռիսկ՝ Սովորողների՝ դպրոցի տարածքից դուրս գտնվելու ընթացքում անվտանգության ապահովում: Չեզոքացնող միջոց՝ դպրոցի համակարգմամբ՝ աշակերտների տեղափոխման կազմակերպում:	ծնողական համայնքի ներդրումներ	ամենամյա հաշվետվություն և մշտադիտարկում

Ոլորտ 6. Ուսումնական միջավայրի բարելավում

Նպատակ. Սովորողների կրթության ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծում

Խնդիր 1.Սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքի իրացումը հանրակրթական պետական չափորոշչին համապատասխան

Խնդիր 2. Նորարարական ծրագրերի իրականացում, մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում

1	Կազմակերպել հայրենասիրական, հումանիստական,քրիստոնեական, ֆիզիկական, գեղագիտական, սեռական դաստիարակություն՝ ուսուցմանը զուգահեռ:	2023-28թթ շարունակական	Ուսումնական գծով տնօրենի տեղակալ, ՄԿԱՏ, ԴԱԿ, առարկայական մեթոդմիավորում, ուսուցիչներ	Ռիսկ՝ կողմերի ոչ բավարար ներգրավվածություն: Զեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ արժեհամակարգային հարցերի հարցերի շուրջ:	դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	ամենամյա հաշվետվություն
2	Ստեղծել սովորողների կրթության ու դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների	2023-28թթ շարունակական	Տնօրեն/համակարգող, տնտեսվար, խորհրդակցական մարմիններ	Ռիսկ՝ անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն կամ անբավարարություն: Զեզոքացնող միջոց՝ անհրաժեշտ պայմանների ստեղծման կարևորությունը ներկայացնող հանդիպում-քննարկումներ շահառու խմբերի հետ :	դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	ամենամյա հաշվետվություն
3	Կազմակերպել արտադասարանական խմբակներ	ուս. տարվա ընթացքում	Տնօրեն, ՄԿԱՏ, ԴԱԿ, համապատասխան մասնագետներ	Ռիսկ՝ կողմերի ոչ բավարար ներգրավվածություն, մոտիվացիայի պակաս: Զեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ հարցի կարևորության շուրջ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
4	Կանաչապատել դպրոցի տարածքը	2023-28թթ շարունակական	ուսուցիչներ, ծնողական խորհուրդ, աշակերտական համակազմ	Ռիսկ՝ կողմերի ոչ բավարար ներգրավվածություն: Զեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ բնապահպանական հարցերի շուրջ:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն

Ոլորտ 7. Նորարարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում
Նպատակ.Նորագույն կրթական տեխնոլոգիաների և մեթոդների տեղայնացում, ուսուցիչների ՏՀՏ կարողությունների հզորացում
Խնդիր 1. Նոր տեխնոլոգիաների փորձարկում
Խնդիր 2. Համապատասխան նյութատեխնիկական բազայի ներդնում

1	Տեղայնացնել նորագույն կրթական տեխնոլոգիաները և մեթոդները, հզորացնել ուսուցիչների ՏՀՏ կարողությունները:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնա խմբերի ղեկավարներ, մանկավարժական համակազմ	Ռիսկ՝ անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն: Չեզոքացնող միջոց՝ ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային կառավարում:	դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում
2	Ստեղծել «տեխնոլոգիական նորարարության» լաբորատորիա, որտեղ սովորողները կարող են համատեղ աշխատել նախագծերի վրա, փորձարկել նոր տեխնոլոգիաներ և առաջարկություններ ստանալ համապատասխան գիտելիքներ ունեցող մասնագետներից:	2023-28թթ շարունակական	Տնօրեն/համակարգող, տնօրենի տեղակալ, մանկավարժական և աշակերտական համակազմ, այլ կազմակերպություններ	Ռիսկ՝ անհրաժեշտ ֆինանսավորման բացակայություն: Չեզոքացնող միջոց՝ ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային կառավարում:	դպրոցի բյուջե, օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներ	ամենամյա հաշվետվություն և արձանագրությունների կազմում

Ոլորտ 8. Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր
Նպատակ. Իրավական ակտերի կազմման գործընթացում դպրոցի անձնակազմի ներգրավվածության ընդլայնում:
Խնդիր 1. Ոլորտին առնչվող իրավական ակտերի իրազեկում:

1	Ընդլայնել իրավական ակտերի կազմման գործընթացում դպրոցի անձնա կազմի ներգրավվածու - թյունը:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, համակարգող, տնօրենի տեղակալ	Ռիսկ՝ ուսուցչամանկավարժական համակազմի շրջանում իրավական ակտերի կազմման գործընթացում ներգրավվածության կարևորության գիտակցման բացակայություն: Չեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ՝ դրա կարևորությունը ներկայացնելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն
2	Ծանոթացնել դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտերին, դրանց էլեկտրոնային հարթակներին (emis.am, e-draft.am, arlis.am, e-gov-.am և այլն), կազմակերպել սեմինար-քննարկումներ:	2023-28թթ շարունակական	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբերի ղեկավարներ,	Ռիսկ՝ ուսուցչամանկավարժական համակազմի շրջանում նմանօրինակ հանդիպումներին մասնակցության մոտիվացիայի բացակայություն: Չեզոքացնող միջոց՝ հանդիպում-քննարկումներ՝ դրա կարևորությունը ներկայացնելու նպատակով:	ֆինանսավորում չի պահանջում	ամենամյա հաշվետվություն

ԾՐԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած նախաձեռնություն, միջոցառումների ծրագիր կամ որևէ ծրագրավորված գործընթաց կատարման ընթացքում ենթարկվում է բազմաթիվ արտաքին և ներքին գործոնների ազդեցության, որոնք կարող են խոչընդոտել նախանշված գործողությունների կատարմանը: Այդ գործոնների շարքին հարկ եմ համարում դասել՝

- ✓ հավանական վտանգները՝ կապված առկա խնդիրների լուծման համար համարժեք ֆինանսավորման աղբյուրների սակավության և ֆինանսական ռեսուրսների անբավարարության հետ,
- ✓ ծնողի անտարբեր վերաբերմունքը դպրոցի և սեփական երեխայի նկատմամբ,
- ✓ հասարակության մեջ բարոյական արժեքների անկման միտումները,
- ✓ աշակերտների թվի նվազումը կախված՝
  ա) ծնելիության անկումից,
  բ) արտագաղթի ծավալի աճից,
  գ) դպրոցի ներքին խնդիրներին չառնչվող այլ գործոններից:
- ✓ մանկավարժական անձնակազմի անդամների զգալի մասի մոտ առկա սոցիալտնտեսական խնդիրների և աշխատանքի բնույթից բխող ինտելեկտուալ ծանրաբեռնվածության և նյարդահոգեբանական լարվածության բացասական համադրությունը,
- ✓ մանկական հանգստի կազմակերպման հետ կապված միջոցառումներին ոչ բավարար մասնակցությունը. կինո, թատրոն, թանգարան այցելելու անհնարինությունը՝ դպրոցին պատկանող փոխադրամիջոցի բացակայության պատճառով:

Դպրոցի ղեկավարությունը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու վերը թվարկված գործոններին, դրանք առավելագույնս չեզոքացնելու հնարավորությանը՝ նպատակ հետապնդելով անվերապահորեն կատարել ծրագրված միջոցառումները:

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ՉԱՓԱՆԻՇ	ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՏՈԿՈՍԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
Ամբողջ ծավալով իրականացված աշխատանքներ	80-100%
Մասամբ իրականացված աշխատանքներ	50-70%
Թերի իրականցված աշխատանքներ	10-40%
Չիրականցված աշխատանքներ	0%

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ	Գնահատական		
Ոլորտ 1. Դպրոցի շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի արդիականացում	գերազանց	լավ	բավարար
Ոլորտ 2. Կրթության որակի և սովորողների առաջադիմության բարձրացում	աճ	նվազում	
Ոլորտ 3. Համագործակցություն դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների հետ	ակտիվ	պասիվ	
Ոլորտ 4. Ուսուցչամանկավարժական անձնակազմի կարողությունների զարգացում	գերազանց	լավ	բավարար
Ոլորտ 5. Համագործակցության ընդլայնում պետական և համայնքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների հետ	աճ	նվազում	
Ոլորտ 6. Ուսումնական միջավայրի բարելավում	գերազանց	լավ	բավարար
Ոլորտ 7. Նորարարական ու ստեղծարար տեխնոլոգիաների տեղայնացում	աճ	նվազում	
Ոլորտ 8. Դպրոցի գործունեությունը կարգավորող իրավական ակտեր	գերազանց	լավ	բավարար

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Զարգացման ծրագրի գնահատումը մի գործընթաց է, որի ժամանակ պլանավորվում և իրականացվում է արդյունքների վերհանում և համեմատում: Յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից ելնելով և տարբեր գնահատման գործիքներ կիրառելով հնարավոր է չափել կատարվող աշխատանքներն ու ակնկալվող արդյունքները:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Տարեկան առնվազն երկու անգամ, յուրաքանչյուր կիսամյակի վերջում, կառավարման խորհուրդը իրականացնում է ծրագրի վերահսկողություն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներ են:

Զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունն ու դրա հիման վրա կազմված համապատասխան արձանագրությունը ներառում է ընդգրկուն տեղեկատվություն գործողության կատարված, մասնակի/թերի կատարված ու չկատարված լինելու մասին: Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին տեղեկատվությունը ներկայացվում է տարեկան հաշվետվություն ներկայացնելնելիս:

Զարգացման ծրագրի կատարողականի վերահսկողություն	Յուրաքանչյուր ուսումնական տարում առնվազն 2 անգամ ներկայացնել կառավարման խորհրդին
Հաշվետվության ներկայացում մանկավարժական ու ծնողական խորհուրդներին	Յուրաքանչյուր ուսումնական տարում 1 անգամ ներկայացնել մանկավարժական ու ծնողական հանրույթին

Զարգացման ծրագրի կատարման տարեկան հաշվետվության ձևաչափի նմուշ

N	Միջոցառում/ գործողություն	Ակնկալվող արդյունք	Կատարված աշխատանքի նկարագրություն	Սահմանված ժամկետում միջոցառման/ գործողության չկատարման կամ մասնակի կատարման (առկայության դեպքում) պատճառները	Զարգացման ծրագրում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկություններ
1					
2					
3					

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեծապես գիտակցելով պատասխանատվության աստիճանը՝ տնօրեն ընտրվելու դեպքում ես կարևորելու եմ խորհրդակցական մարմինների հետ սերտ համագործակցությունը, առաջնորդվելու եմ դպրոցի կառավարման ժողովրդավարական ոճով: Իմ գործունեության ընթացքում գերակա է դառնալու կրթության որակի բարելավումն ու բարձրացումը:

Դպրոցը կենդանի օրգանիզմ է, որը կարիք ունի ամենօրյա խնամքի և հոգատարության, իսկ տնօրենը ուսումնական հաստատության այն առաջնորդն է, ում հետ դպրոցի թե՛ անձնակազմը, թե՛ խորհրդակցական մարմինները, թե՛ աշակերտներն ու ծնողները կարող են խոսել իրենց ներկայի և ապագայի, ծրագրերի ու խնդիրների մասին:

Տնօրեն նշանակվելու դեպքում՝ առաջնորդվելու եմ Սոկրատեսի հետևյալ իմաստախոսությամբ՝ «**Կրթությունը ջահի բոցավառումն է, ոչ թե դատարկ անոթի լցոնումը**»:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԴԱԿ-դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ
ԿԱՊԿՈՒ-կրթության առանձնահատուկ պահանջների կարիք ունեցող
ԿԳՄՍ-Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ԿԶՆԱԿ-Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն
ԿՏԱԿ- կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն
ՀԿ-հասարակական կազմակերպություն
ՀՀ- Հայաստանի Հանրապետություն
ՄԱԿ-Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԿԱՏ-մասնագիտական կրթական աջակցությունների գծով տեղակալ
ՆԳՆ-Ներքին գործերի նախարարություն
ՆԶՊ-նախնական զինվորական պատրաստություն
ՊՆ-Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ-պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՏՀՏ-տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաներ